




ԶԱՄԱՐՈՒՆ

1981

ՃԱՏԻՔ

Amc 146



ԼԸ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ


Կոլեմբեր - Կեկոլեմբեր

1981





Հ.Ը.
ԳՐԱԴԱՐԱՆ



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ


ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԳԼԵՃՆԵՐԻՆԻ - ԳԼԵՃՆԵՐԻ

1891





ԵՂԻՎԱՐԴ (ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԵՐԵԱՆ)

ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ

ԱՒԵՏՈՒՄԸ

«Եւ ծնցես Որդի եւ կոչեսցես զանուն
նորա Յիսուս (Ղուկ. 1—31)

Յիսուս Աստուծոյ խօսքն էր՝ երկինքէն երկիր իջած, կ'ըսէ Յովհաննէս Աւետարանիչը, որպէսզի մարդիկ կարենային լսել իր ձայնը և տեսնել իր դէմքը՝ երկնքի լոյսերով ողողուն: «Մարդացաւ» կը յարէ «Հաւատամք»ը, շեշտելու մեր Տիրոջ մարդութիւնը:

Խորհրդաւոր գիշերուան մը մէջ երկնքի դուռները բացուեցան, նման Աստուծոյ շրթներուն եւ ծնաւ Սուրբ Բանը, որ մանկան մը մարմինը առած, քնացաւ լոյսի պէս մաքուր կոյսի մը կուրծքին՝ որ ընտրեալ տաղաւարն էր Միածնին:

Այս մեծ իրողութիւնը չէր կրնար իրագործուիլ ոչ բնական օրէնքով, ոչ ալ ազատ կամքովը մարդուն, այլ միայն ամենագոր փառաբանող Նախախնամողին: Աստուած կ'ընտրէր մաքուր եւ կուսական էութիւն մը, անոր մէջէն ծնունդ տալու կենդանի Բանին, Ինքզինքին:

Այսպէս կը ներկայացնէ Ղուկաս Աւետարանիչը այս հրաշալի յայտնութիւնը. «Հրեշտակ երեւցաւ Գալիլիոյ Նազարէթ քաղաքին մէջ ապրող կոյս Մարիամին, յայտնելու անոր թէ զաւակ մը պիտի ունենայ եւ Յիսուս պիտի դնէ Անոր անունը»: Մարիամ որ տալիսին նոր նշանուած էր Յովսէփին հետ, կ'ալլայի, լսելով հրեշտակին խօսքը: «Մի երկնջիր, Մարիամ», կը յարէ լոյսերով ողողուն հրեշտակը, «դուն շնորհ գտած եւ Աստուծմէ, պիտի յղանաս եւ ծնիս քու միածին զաւակդ որ մեծ պիտի ըլլայ եւ պիտի կոչուի

Որդի Բարձրելուն: Իրեն պիտի արտի իր նախահօր Դարի արժույնը եւ իր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ:

«Բայց ինչպէ՞ս կրնամ յղանալ», կ'ըսէ ակամայ երանելալ կոյսը, հիագար-
հուր հրեշտակի պատգամէն, «երբ տակաւին չեմ ամուսնացած»: Հրեշտակը
կը ժպտի քաղցրօրէն, նման բոցէ ժանեակի մը որ ալիք ալիք կը շղարշուէր
իր շրթներէն. «Ա. Հոգին քեզի պիտի գայ եւ Գերագոյնին զօրութիւնը պիտի
շողայ շուրջդ, որովհետեւ ան որ պիտի ծնիս տուր է եւ Աստուծոյ Որդի
պիտի կոչուի: Եղիսարէն ազգականդ եւս յի է զաւակով մը, հակառակ իր
խոր ծերութեան, որովհետեւ ոչինչ անկարելի է Աստուծոյ համար»: Մա-
րիամ յիշեց Սառան, մայրը Իսահակին եւ Աննան, մայրը Սամուէլ մարգա-
րէին: Իր կուսական յոյսիւնը թեղմնաւորուած պտուղն էր երկնքին եւ նա-
խերգանքը Մեսիայի ծննդեան:

Փարտած էր մշուշը, Մեսիայի ծննդեան երգը կը բարձրանար Ա. Կոյսի
յիշողութեան մէջէն մետաքսէ թւի մը պէս գողտր եւ աներկրային. «Անա-
ւասիկ կոյս յասցի եւ ծնցի որդի եւ կոչեսցեն զանուն նորա Էմանուէլ»: Յետոյ
վախով նայեցաւ հրեշտակին որ ձեռքերը ծալած կը խոնարհէր եր-
կիւղածօրէն, կարծես թագաւորի մը առջեւ: «Օրհնելալ ըլլայ Տիրոջ կամբը»
մրմնջեցին մեծարեալ կոյսին շրթները, արցունքներու մէջէն: Այժմ իր սիրտը
լեցուած էր ուրախութեամբ եւ իր հոգին կը յորդէր գետի մը պէս, գալիք
մեծ զարնան մտածումով: Կը քալէր գլուխը բարձր, իր հոգին մէջ սեղմած
աստուածային գաղտնիքը: Տխուր էր յաճախ, ինչպէս կ'ըլլան խորհուրդով եւ
քաղցրութեամբ լեցուն սիրտերը: Իր տխրութիւնը սակայն նման էր ոսկի շղար-
շին՝ աշնան ծառերուն վրայ փոռած, եւ կամ երկինքէն կարած երգի, գալիք
մեծ տօնին նաւակատիքը փառերգոյ: Իր ծախսը քաղցր էր նման զարնան
արեւուն, որ կը հասունցնէ սերները վաղուան քարիքին, անիկա նման էր
աստղերու փոշիին, ինկած մանուկներու թարթիչներուն:

Երագի մէջ էր կարծես: Անուշ դողով մը կը յորդէր իր ամբողջ էութե-
լիւնը. կ'զգար թէ նոր աշխարհի մը մէջ էր. իր շուրջ ամեն ինչ ոսկեղոյն կը
թուէր ըլլալ, որովհետեւ Տէրը անոնց մէջէն կը ժպտէր: Երկինքը նստած
սաղորի գոյն ունէր, մեղմ հով մը կը փչէր լեռներէն, վարդի եւ յամիկի բոյ-
րերով, իսկ իր աչքերուն կը կրկնուէր անդադար հրեշտակին սլատկերը, որ
ձեռքերը ծալած կը խոնարհէր իր առջեւ:

(Էջ 105—106)

ԼՈՒՍԱՌՈՐՇԻ ՏԵՍԻԼՔԸ

Լուսաւորիչ՝ նստած խորը իր մեծարանին, լուռ կը խոկար: Նոր էր դար-
ձեր Հոխիսիմեանց կոյսերու նշխարներու ընդհողումէն, որոնց մահուան եւ
յիշատակին կսկիծը կը դողար տակաւին իր մէջ, տրտում բայց թեւաւոր
փառքով: Մութէն հաղող քաղաքին վրայ՝ աստղեր, իսկ մեծարանի որմին
դիմաց մոմ մը տմոյն, կարմիր հեւքով:

Ու կը հիստին թարթիչները աստուածաբեալ հայրապետին: Իր հոգիի աչ-
քերուն դէմ կը տողանցէ լուսասփիտ շարանը Հոխիսիմեանց կոյսերուն, եր-
կինքն ու երկիրը ճարմանդող կամուրջէ մը՝ հսկայ ծիածան մը բանալով աշ-
խարհի ստուած մարմնին վրայ: Կ'անցնէին անոնք, ճերմակով դալկացած
լուսեան մը մէջէն, այնքան խաղաղ ու յանկուցիչ, որ հովն անգամ կը վախ-
նար անոնց վրայ թեւ բանալու, որովհետեւ անոնք տարիներու գիշերն ու

խոովքը կը կրէին իրենց հոգիներու խորը: Զգած իրենց դամբարանները, թեթեւցած մեղքի բեռներէն եւ թօթափած ինչ որ մարդոց ապիրատութիւնը բարդած էր անոնց անհիւսկեան, ձոյլ ծփանքով կը քալէին իրենց անծալ երազի ճամբէն: Ոմանց պարանոցին դեռ կը բաքախէր սուրբերուն բացած կիսալուսինը եւ ուրիշներու կուրծքին՝ փոսացող վերքերը նիզակներուն: Սակայն անոնց աչքերէն յոյսին շուշանը թերթ առ թերթ իր ճառագայթները կը բանար:

Յետոյ լսեց անեղ ձայն մը որոտումի, եւ տեսաւ փայլատակող կայծակը որ երկուքի կը բանար երկնքին վարագոյրը: Աստեղակոտ ճամբայէ մը կ'իջնէր լոյսեր հագած Գալիլիացին, առտուան ցօղին մէջ լուացուած ոսկիին պէս: Տաք էին անոր աչքերը եւ կապոյտ՝ մման գառնան արեւին մէջ թեւ բացող մանուշակի թերթերուն: Անոնց խորը տարրերուն եւ աստուածներուն սկզբնանկիւյթը կը թրթռար: Դէմքը, թաթխուած ծիրանի լոյսին մէջ, մման էր արշալոյսի մը, որ գիշեր չունի: Իսկ մազերէն ծովի պէս լոյս կը վազէր: Մարմնին շուրջ կը ծածանէր կարմիր պատմութեանը, մարդոց գործած մեծ ոճիրին գոյնով:

Երկնքէն կը հոսէր ակնախտիդ լոյս մը, որուն մէջէն կը քալէին հրակերպ եւ մարդաստեղի էակներ, մման արեւու ճառագայթներուն մէջ լողացող շամանդաղներու: Յետոյ տեսաւ որ լուսեղէն մարդը կը մօտենար քաղաքին, եւ իր ձեռքին մէջ բռնած ոսկի ուռով կը զարմէր Սանդարամետի ժայռին: Յետոյ կը լսէր ձայնը եկողին՝ ինչպէս առտուան ցօղը ծաղիկներու բաժակին մէջ. «Խաղաղութիւն եւ օրհնութիւն իմ ծառային, կուգամ դնել հիմն անասան Եկեղեցւոյն Հայաստանի, սրտին վրայ այս փշրուած մեղքի ժայռին: Ու մի վախճար, ոչ դժոխքի ուժերը ժամտ, ոչ ալ մաշումը դարերուն՝ պիտի կրնան ազդել անոր ուժին եւ ամբողջեան»:

Եւ այդ զարկէն աշխարհացումց, կը բացուէին կամար կամար, լոյսի սիւներ, իրարու մէջ, իրարու քով, բարձրաբերձ ու թափանցիկ, որոնք ամպածրար ու դիտական պալատներու մման երկնքէն երկիր կ'իջնէին, այնքան մման սիրտերու մէջ ապրող եւ անհունին հետ կանգնած հայրենի մեծ լեռան:

Կը լուսագծուէին երեք խորաններ, առաջինը հոն՝ ուր նահատակուած էր Հոփիսիմէն իր երեսուներեք ընկերներով, երկրորդը՝ ուր թաղուած էր Գալիանէն իր երկու ընկերներով, եւ երրորդը՝ հնձանին վրայ: Իրարու կապուած լուսեղէն այս կամարներուն վերեւ կը հանգչէին գմբէթներ՝ ճաճանչավառ խաչերով: Հայրապետի աչքերուն դէմ տարածուած անծայրածիր դաշտին վրայ կը բացուէր յորդահոս աղբիւր մը, կազմելով կաթնամման ճերմակ ծով մը ջուրերու:

Կ'իյնար ապրշում քօղը տեսիլքին: Ապագայի պատկերին դէմ կը յուզուի սիրտը Լուսաւորիչին, որ իր արցունքներուն մէջ, սպասումի քաղցրութեամբ ծանրացած կը ժպտի: Լուսամուտէն կ'ոսկիանար Արարատը՝ երկընքին դէմ ցցած իր արծաթ սաղավարտը:

Աստուածարեալ հայրապետը պատմեց իր երազը Տրդատ թագաւորին, իշխաններուն եւ ժողովուրդին: Անոնք խանթակաթ ու գօտեպինդ՝ լծուեցան գործի: Լեռան ճերմակ ընդերքներէն շալակ շալակ, բերին մարմար ու կուսնիթ, եւ բարձրացուցին, կամար կամար, Ծողակաթի, Հոփիսիմէի եւ Գալիանէի վկայարաններուն բաժակները, իբրեւ աղաչանք ու ընծայում դէպի երկնք, հայաչափուկ ու գողտր, մման մեր հոգիի ճերմակ շէնքին, ամփոփ ու տրտում, խուլ կշռոյթին տակ դարերուն:

Ամենէն վերջ իր աւարտին քերին անձեռագործ կաթողիկէն Էջմիածնի, ձեռած հրաշք երկնքին դէմ, ըղձանքն ինչպէս Հայ սիրտերուն, Հայոց երկրին: Դարերն ի վեր ան կը մնայ, խարսխուած մեր աշխարհի ամուր սիրտին: Ան կը մնայ նման քառին Լուսաւորչի, որուն լոյսին նայեցան միշտ ու կը նային, աչքեր անուշ, աչքեր տրտում սերունդներու: Ու հոն է ան, Արարատեան մայր աշխարհի կուրծքին վրայ. զանգն ու կոշնակ օրն երկու հեղ կ'երգեն փառքը մեր Աստուծոյն: Եւ կը հաւատայ ժողովուրդն Հայ՝ որ ամէն օր արեւին հետ, Աստուած կ'իջնէ իր աթոռէն եւ կը նետէ արփուն իր սուրբ՝ սերմը կարմիր մեր հաւատքին, սիրտերուն մէջ հաւատաւոր: Յաղթանակի կոթողն է ան Լուսաւորչին, հրեղէն սին, լուսէ սանդուխ մեզ երկնքին առաջնորդող:


• •

Յուզիչ եւ նշանակալից է դրուագը ԺԷ. դարու կէսէն մեզի եկած: Կը պատմուի թէ երբ Պարսիկները Օսմանցիներէն ետ առին Արարատեան գաւառը, քանդեցին Հայ եկեղեցիներէն շատերուն զանգակատունները: Սակայն երբ ասպատակող բանակը մօտեցաւ Վաղարշապատին, հրամանատարը լուր դրկեց սպարապետին. «Աշխարհի վրայ ցրուած բոլոր Հայերուն ամենէն մեծ սրբարանին, Էջմիածնի Մայր Տաճարին առջեւն ենք. պե՛տք է որ կործանենք անոր ալ զանգակատունները»:

«Ոչ», եղաւ սպտասխանը սպարապետին, «թողուցէք որ մայրը յաճախ խօսի իր զաւակներուն հետ, մի կտրէք իր լեզուն»:

(Էջ 218—215)





ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԴԱՎԻԹ ԹԱԳԱՎՈՐ

Դավիթ գագաթ մըն է Աստվածաշունչին մեջ և գրեթե ամենեւնի բազմաշնորհ անձը Մովսէսի հետ: Վերջինին պէս՝ հանգամանորէն տրված է նաև Դավիթի կյանքը և գործը վերոհիշյալ գիրքերուն մեջ, որոնց գրեթե կեսը հատկացված է իրեն: Այնպէս որ մեր ընելիքը պիտի ըլլա փոքր անոթի մը մեջ համադրել անոր ծով կյանքը:

Դավիթի կյանքին վարագույրը կբացվի իր օծումով իբրև թագավորացու Իսրայելի. «Եվ Տիրոջ Հոգին խաղաց Դավիթի վրա այն օրէն սկսյալ» (Ա. Թ. Գ. ԺԶ 13): Այդ պահուն իսկ ան կներկայացվի իբրև երիտասարդ մը, «որ գիտէ Սաղմոս. իմաստուն և պատերազմիկ մարդ մը, հանճարեղ և ճարտարաբան, պայծառ աչքերով և գեղեցիկ տեսքով, և Աստված անոր հետ» (Ա. Թ. Գ. ԺԶ 18, Բղդ. ԺԶ 12): Այս քանի մը բառերը մեզի կու տան Դավիթի ֆիզիքական, իմացական և հոգեկան պատկերը: Այս երեք մարզերուն մեջ ալ գերազանց եղած է Դավիթ:

Ամենեւն առաջ ան մեզի կներկայանա իբրև ուժեղ, անվախ ու քաջակորով հովիվ մը, որ իր ընտանիքի հոտը պաշտպանելու համար արջերու և առյուծներու դէմ կելլէ: Ոչխարներու հանդէպ ցույց տված այս անձնոյի հոգածության համար Աստված կանչեց զինքը իր ժողովուրդի հովվության, ըստ ամետարանական սկզբունքին, թէ «ով որ պզտիկ գործերուն հավատարիմ է, մեծերուն մեջ ալ հավատարիմ պիտի ըլլա»: Իր քաջության և անվախության կոթողն է ճակատիլը Գողիաթին հետ:

Անգերազանցելի զորավար մըն էր Դավիթ: Քաջություն և վստահություն կներշնչէր իր շուրջիններուն, որոնք կապված էին իրեն անձնագոհության

և համատարմության բարձր զգացումներով: Երկրին հզորագույն մարդերը իրեն քաշեց և իր առաջնորդությամբ և օրինակով ավելի կատարելագործվեցան անոնք քաջության մեջ:

Մեծագույն թագավորն է Իսրայելի: Երկիրը կառավարեց իմաստությամբ և արդարությամբ. «Դավիթ ի գործ դրավ օրենքը և արդարությունը ամբողջ իր ժողովուրդին վրա»:

Արվեստագետ մըն է Դավիթ բառին լայնագույն առումով: Նախ բանաստեղծ մըն է, որուն կվերագրվի Սաղմոսաց Գիրքը: Եթե ոչ ամբողջությամբ գեթ անոր կորիզը արդարև Դավիթի կառուկանի: Հորինեց սրտատուշ ողբերգ մը Սափուղ թագավորի և իր անմոռանալի բարեկամ Հովնաթանի մահվան վրա (Բ ԹԳ. Ա 17—27): Իր Սաղմոսներեն առնվազն երկուքը ընդելուզված են կենսագրության մեջ (Տես Բ ԹԳ. ԻԲ և ԻԳ գլուխները): Սաղմոսաց Գրքի ամենեն նշանավորներեն 23րդ Սաղմոսը, «Տերը իմ հովիվս է», միայն հովիվ մը կրնար գրել, և այդ սաղմոսը և վերոհիշյալ ողբը միայն բավական են Դավիթը պատկերելու իրավ բանաստեղծի տիպադրում:

Երածիշտ, երգող, պարող և նվագահար է Դավիթը: Իր սաղմոսներուն և հանգակներն ալ ինքը կհորինէր: Երբ մոլեգնած Սափուղը ամոքելու համար «քնարահար և երգող» մը կփնտռեն, ամենքին միտքը կուգա Հեսեկի որդի Բեթլեհեմցի Դավիթը: Տիրոջ Տապանակը Երուսաղեմ փոխադրելու ատեն Դավիթ չի քաշվիր մասնակցելէ ժողովրդային ուրախության արտահայտության: Մեկդի դրած իր թագը և արքայական պատմունանը, «Դավիթ տավիղ կզարնէր, և ամբողջ եռանդով կպարեր Տիրոջ առջև»:

Դավիթ իր ֆիզիքական և իմացական ձիրքերու կողքին օժտված մըն է առավելաբար հոգևոր շնորհներով, որոնց պատճառով արդարև որակված է «Այդ ըստ սրտի Աստուծոյ»: Իր կրոնասիրությունը կհայտնվի ոչ միայն իր սաղմոսներուն մեջ, այլ նաև ամբողջ կյանքի ընթացքին: Խոնարհ է Դավիթ իր մեծության մեջ ու այս ոգին այնքան գեղեցկորեն արտահայտված է իր աղոթքներեն մեկին մեջ, որ կսկսի սա բառերով. «Ով եմ ես, Տեր իմ Տեր, և ով է իմ տունս, որ այսքան բարձրացուցիր զիս» (Բ ԹԳ. Է 18—29):

Ըստ են Դավիթի վեհանձնության դրվագները: Երիցս առիթ կներկայանա սպաննելու զինք անիրավաբար հարածող Սափուղը, սակայն կխնայի անոր կյանքին, իբրև իր թագավորը և «Տիրոջ օծյալը»: Իր ապերախտ և փառամոլ զավակը, Աքիսողոմ, երբ իր դեմ կապառամբի, և այդ պատճառով ինք կհարկադրվի հեռանալ Երուսաղեմեն, իր զորքերուն կպատվիրեն չսպաննել զայն պատերազմի մեջ: Ու երբ հակառակ իր հրամանին կսպաննվի ան, Դավիթ կպոթթիա հայրական սիրով. «Աքիսողոմ, որդյակ իմ Աքիսողոմ, երանի ես մեռած ըլլայի քու տեղդ»:

Աստվածաշունչի բոլոր տիպարներն ալ առավել կամ նվազ չափով կարտահայտեն մարդկային բնության զանազան երեսները, բարի կամ չար, սակայն ոչ որ կհավասարի այս մարդի մեջ Դավիթի: Կան իր մեջ ամեն ինչ որ մարդկային են, վեհագույններեն ամենեն նվառները: Դավիթին իսկական մեծությունը կկայանա վեհմեները աճեցնելուն և կիրարկելուն՝ իսկ նսեմները նվազագույնի վերածելուն մեջ, առանց սակայն խուսափիլ կարևոր մեղքին իր տուրքը վճարելու տկարութենեն:

... Դա՛ն մը գրկվեցավ նաև իր զանեն և նշավակ դարձավ աննեքին և անարգանքին իր թշնամիներուն: Այս բոլորին մեջ սակայն Դավիթ երբեք չիզեց իր կապը և փոխանությունը Աստուծո՛ւն: Իր արաշխարանքին գերազանց արտահայտությունն է «Ուղորմա՛ւ ինձ Աստուծա՛մ ըստ մեծի ողորմո՛ւ-

թեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ» սկզբնավորութեամբ Սաղմոսը: Իսկ իր գլխուն եկած փորձանքները կրեց համբերութեամբ և խոնարհ ոգովով: Զինք թշնամանողներն ներեց, երբ վերստին իր գահին տիրացաւ: Ունեցաւ խաղաղ մահ, իր հաջորդը նշանակելէն և իր գահը ամուր հիմքերու վրա դնելէն հետո:

Դավիթ նշանավորագույն նախահայրն է Քրիստոսի. քիչ անգամ Հիսուս կոչված է «Որդի Հովսեփի»։ Բայց բազմիցս կոչված է «Որդի Դավթի», իբրև ծանոթ տիտղոսներէն մեկը Մեսիային, որ պիտի գար նորոգելու Դավթի թագավորությունը, իր հոգևոր և հավիտենական իմաստով, ինչպէս ըսաւ ավետավոր հրեշտակը Մարիամին. «Ահա պիտի հղանաս և որդի մը պիտի ծնիս... Եվ Տեր Աստված պիտի տա անոր իր Հոր Դավթի անունը, և պիտի թագավորէ Հակոբի տան վրա, և անոր թագավորությունը վախճան պիտի չունենա» (ՂԿ. Ա. 32):

Դավթի հիշատակը կտոնվի մեր մեջ Ա. Ծնունդը կանխող չորս «Ավագ տոներ»-էն իբրև առաջինը, «Տեստենդբայր» կոչեցյալ Հակոբոս Առաքյալի հետ: Բացառիկ և իմաստալից երևոյթ մըն է սա, որ ըստ մարմնո Քրիստոսի «Նախահայրը» և ըստ մարմնո Անոր «եղբայրը», այսինքն ազգականը, միասին կտոնախմբվին, խորհրդանշելու համար Հին և Նոր Ուխտերուն միաձուլումը Քրիստոնեական տնտեսության մեջ:

Դավիթ վախճանեցաւ 70 տարեկանին: Իշխած է 1055—1015 Ն. Բ.: Հույնք և Լատինք ևս մեզի պէս կհիշատակեն զայն դեկտ.ի վերջերը:

ՀԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԱՅՐ

Հակոբոս այն օղակն է, որ կմիացնէ Ավետարանի սուրբերը Գործք Առաքելոցի մեջ հիշված սուրբերուն հետ: Յուդաքեր կիներով՝ դուրս կուգանք Ավետարանի էջերէն և Հակոբոսով կմտնենք Գործք Առաքելոցէն ներս: Հակոբոս թէն հիշված է Ավետարաններու մեջ, բայց ոչ որպէս քրիստոնյա գործիչ մը, այլ նախ իբրև մեկը Քրիստոսի «եղբայրներէն»: Երկրորդ հիշված է զատորոշելու համար իր Մայրը համանուն մյուս Մարիամներէն: Այնքան նշանավոր և հանրածանոթ էր Հակոբոս նախնական եկեղեցիի մեջ, որ իր մայրը կոչված է «Մարիամ Յակոբու փոքրկան և Յովսէայ մայր» (Մրկ. ԺԵ 49): «Փոքր Հակոբ» կոչված էր ան կամ կազմով ու տարիքով փոքր եղած ըլլալուն, և կամ ինչ որ ավելի հավանական է, հարաբերաբար Հակոբոս Զեբեդյանի, որ ծանոթ էր «Մեծն Հակոբոս» հորջորջումով:

Պետք չէ շփոթել զայն նաև Հակոբոս Ալփյանին հետ, որ Տասներկուքէն էր: Հակոբոսին մայրը կոչված է նաև որպէս «Մարիամ Կղէովպայ», այսինքն Կղէովպասի կին Մարիամ, որով Հակոբոսի հոր անունն ալ ծանոթ է Ավետարաններէն:

Բացահայտ է Ավետարաններէն նաև թէ «եղբայրները դեռ չէին հավատացած» Հիսուսի (Հովհ. Է 5): Բայց Պողոս Առաքյալ կհաստատէ, որ Հիսուս հետ հարության հատկապէս երևցած է նաև Հակոբոսին (Ա. Կորնթ. ԺԵ 7): Այս երևումը ամենայն հավանականութեամբ պատճառ եղած է Հակոբոսի դարձին, որ իր կարգին դարձի բերած պիտի ըլլա նաև մյուս Տեստենդբայրները, այնպէս որ, երբ կմտնենք Գործք Առաքելոցէն ներս, կը տեսնենք որ ասոնք ալ խմբովին ներկա են վերնատան մեջ Առաքյալներու

հետ և մաս կկազմեն այն հարյուր քսան հոգիներու, որոնք Ա. Հոգին ստացան Հոգեգալստյան օրը (Գործ. Ա 14):

Հակոբոս կհիշվի իբրև նախնական եկեղեցիի գլխավոր գործիչներեն մեկը՝ Երուսաղեմի առաքելական ժողովի ընթացքին որուն որոշումը ինք կբանաձևեն (Գործ. ԺԵ 13): Քրիստոնեական եկեղեցին իր սկզբնական քայլերուն մեջ առաջացած է երկու թևերով, զորս մեր այսօրվան քաղաքակրթի է կոչել. ՊԱՆՊԱՆՈՂԱԿԱՆ ԵՎ ՀԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ, կամ Հրեական ու հեթանոսական հատվածներ: Վերջին այս քաղաք—հեթանոսական—պետք է հասկնալ իր ազգագրական իմաստով և ոչ՝ քաղաքական առումով: Առաջին խումբին պետք Հակոբոսն է, երկրորդինը՝ Պողոս: Պետքու կաշխատի հավասարակշռությունը պահել երկու թևերուն միջև, հաճախ ավելի հակելով հրեական կողմը: Հակոբոսի կողմնակիցները իրենց տեսակետները հաճախ ծայրահեղության տանելով կպահանջեին որ հեթանոսութենն դարձող քրիստոնյաներ ալ պետք է լրիվ պահեն հրեական օրենքները, օրինակ թլխատվին ու ենթարկվին այլ բազմաթիվ ծիսական սովորությանց, ինչ որ Պողոս անհրաժեշտ չէր նկատեր: Հակոբոս այս պահանջները նվազագույնի վերածեց Երուսաղեմի ժողովին մեջ ինչ որ ամենքի կողմն ընդունելության արժանացավ և իբրև հրահանգ ժողովի կողմն դրվեցավ հեթանոսութենն դարձող քրիստոնյաներուն, Ամսիոք:

Ավանդությունը Հակոբոսը կճանչնա իբրև առաջին եպիսկոպոսը Երուսաղեմի մայր եկեղեցիին: Ամեն պարագային «Սյունիքին» մեկն էր առաջին քրիստոնեական եկեղեցիին, Պետրոսի և Հովհաննեսի հետ, ինչպես կհաստատեն Պողոս Առաքյալ (Գաղտ. Բ 9):

Հակոբոս հիշված է նաև Հովսեփոս հրեա պատմիչի կողմն իբրև «արդար» մարդ մը, այդ առկանը իր վրա մնացած է իբրև մակդիր: Հայսմավորքը կհաստատեն որ. «Աստված օրհնեց և սրբացուց զայն իր մոր որովայնեն. գինի և օղի չխմեց Սամուելի նման. ոչ ալ շնչավոր—մսեղեն—ոնէ բան կերավ. ոչ ալ մազերը կտրվեցան, Սամսոնի պես... Եվ անոր ծունկերը ուղտի ծունկերուն պես կարծրացած էին հաճախակի ծնրադրութենեն»:

Իր հաճատակությունը մանրամասնորեն կպատմվի հին վկայաբանությանց մեջ: Տրված ըլլալով, որ Հակոբոս, Քրիստոնեյա ըլլալով հանդերձ, մեծ հարգանք կվայելեր նաև հրեից մեջ իր պատվիրանապահության և օրինապահության համար, ուստի օրին մեկը քունդատեցին զինքը, որ ելնե տաճարի աշտարակը և այնտեղեն հայտարարություն մը ընն ընդդեմ Հիսուսի, որպեսզի Անոր պատճառով ստեղծված երկվությունը վերնա իրենց ժողովուրդին մեջեն: Հակոբոս սակայն հայտարարեց «Հիսուս Մեսիան է և Աստուծո Որդին, որ այժմ նստած է Աստուծո աջ կողմը և պիտի գա դատելու աշխարհը արդարությամբ»: Ըստեր հավատքի եկան այս հայտարարության վրա, իսկ ուրիշներ վեր ելան ու Հակոբոսը աշտարակեն վար նետեցին ու սկսան քարկոծել զայն. ի վերջո անոնցմն մեկը թափիչի խոշոր փայտով մը փշրեց արդարին գլուխը, որ հոգին ավանդեց առ Աստված 32 թվականին:


Այս Հակոբոսին հիշատակն ալ, Զեքեյան Հակոբոսին պես, սկրտորեն կապված է մեր եկեղեցիին հետ: Նախատակութենեն հետո իր մարմինը բերված ու թաղված էր տան պարտեզին մեջը, որ թաղված էր նաև Հակոբոս Առաքյալի գլուխը: Այս տան տեղվույն վրա շինված է Երուսաղեմի հայոց Պատրիարքության Մայր տաճարը, որ այս իսկ պատճառով կկոչվի «Սրբոց Հակոբյանց տաճար», այսինքն «Սուրբ Հակոբներու եկեղեցի»:

Նոր Կտակարանի մեջ Հակոբոսի անունով թուղթ մը ունի՞նք ուղղված առ հասարակ հրեա քրիստոնյաներուն: Կջատագովե գործնական կրոնքը, որ կհայտնվի ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ մեջ: Թուղթին կեղրոնական գաղափարը կհայտնվի սա խոսքին մեջ. «Եթե մեկը կկարծե որ ինք կրոնասեր է, բայց եթե իր լեզուն չի սանձեր, ինքզինքը կխաբե, այդ մարդուն կրոնքը ընդունայն է: Այն կրոնքը, որ սուրբ և անարատ է Աստուծո և մեր հոր առջև հետևյալն է. այցելող ըլլալ որբերուն և այրիներուն իրենց անելության մեջ, և անարատ պահել անձը աշխարհեն» (Ա. 26—27): Բարի գործերը կհակադրե հավատքի սոսկական խոստովանության. «Ինչպես որ մարմինը առանց հոգիի մեռյալ է, այնպես ալ հավատքը առանց գործքի մեռյալ է» (Բ. 26):

Տեառնեղբայր Հակոբոսի հիշատակը կկատարենք իբրև «Ավագ տոներ»ու առաջինը Դավիթ մարգարեին հետ:

Հուլնք՝ հոկտ. 23: Լատինք՝ մայիս 1:

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 76—80, 180—182)



ՎԵՆԱՐԱՆՈՒՄ



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 61-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 28-ին, շաբաթ օրը, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությանը դահլիճում, Հայոց Հայրապետի նախագահության ներքո, տեղի է ունենում մասնավոր հանդիսություն՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 61-րդ տարեդարձին:

Հանդիսությունը կազմակերպել էր հոգևոր ճեմարանի տեսչությունը:

Նախագահության սեղանի շուրջ, Հայոց Հայրապետի կողքին, տեղ են գրավել ՀՍՍՀ Միևհատրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը, տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Տ. Հուսիկ, Տ. Արսեն արքայազանները և հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

Հանդիսությանը ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, քահանայից դասը, Գևորգույն Հոգևոր Խորհրդի և Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և մայրավանքի ողջ աշխատավորությունը:

Հանդիսության քաջումը կատարվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվազով և ապա Հայոց Հայրապետի աղոթքով:

Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը այնուհետև հանդես է գալիս հանդիսության քաջման հետևյալ բովանդակությամբ խոսքով.

«Միևհատր հանդիսականներ,

Այս օրերին հայ ժողովուրդը ցնծությամբ և հանդիսավորապես տոնում է Հայաստանում սովետական իշխանության հաստատման 61-րդ տարեդարձը, տոնում է Հայաստանի և հայ ժողովրդի վերածրնունդը:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը այսօրվա հանդիսությամբ իր համեստ լուծան է բերում այս տոնակատարություններին:

Աշխարհի գրեթե բոլոր պետությունները ունեն իրենց պետական տոները:

Մեզ համար, սակայն, նոյեմբերի 29-ը սոսկ պետական տոն չէ, այլ մահ կործանման եզրին հասած մեր հայրենիքի փրկության տոնը:

Հայրենիքը հողային մի տարածություն է, որի վրա ծնվում, ապրում ու մահանում են մի ազգի անդամները:

Դժվար է պատկերացնել ազգ՝ առանց հայրենիքի: Սակայն հայրենիքը պարզ հողային մի տարածություն չէ միայն, այլև այն վայրը, որի հետ անբաժանելիորեն կապված են տվյալ ազգի պատմությունը, նրա հոգեկան ու նյութական սրբությունը: Եվ այս իրողություններն են, որ տվյալ հողային տարածությանը շնորհում են «հայրենիք» տիտղոսը:

Հայ ժողովրդի հայրենիք Հայաստանի հետ կապված են քաղում սրբազան դեպքեր ու դեմքեր: Ամեն մի հայ սիրտ անհուն

բերկրանքով ու գոհունակությամբ է հիշում Հայկ նահապետի քաջ ոգին, Տիգրան Մեծի հաղթանակները, Արշակ Երկրորդի և հայոց ապարապետ Վասակ Մամիկոնյանի հերոսությունները, Ավարայրի ռազմիկների գոհաբերությունը, Սարդարապատի հրաշքը և երկու տարի հետո արդեն դեպի անդունդ, դեպի անհայտացում գլորվող հայ ժողովրդի և հայ հայրենիքի վերածնունդը, վերածնունդ, որը տեղի ունեցավ 1920 թվականի նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական իշխանության հաստատումով:

Եվ, կարծում եմ, սխալված չեմք լինի, եթե այս իրադարձությունը համարենք մեր ժողովրդի պատմության ամենամշակակալից դեպքը, թեկուզև սույն այն պատճառով, որ հայ ժողովրդի պատմությունը չընդհատվեց, այլ շարունակվեց: Չէ՞ որ առանց այս իրադարձության այսօր արժեք չեն ունենա ո՛չ Հայկ նահապետը, ո՛չ Տիգրան Մեծը և ո՛չ էլ Ավարայրը:

1920 թվականին հաջորդեցին 61 տարիներ: Այս փոքրիկ ժամանակահատվածում հայ ժողովուրդը ո՛չ միայն արժեկորեց իր անցյալը, այլ նաև իբրև հավատարիմ և արժանի անդամը Սովետական հզոր և եղբայրական մեծ Միության, ստեղծեց իր ներկան և ապահովեց մի փալտում ապագա:

Թույլ տվեք այս մտածումներով հանդիսությունը հայտարարել բացված:

Այնուհետև արժանապատիվ տեսուչը հրավիրում է հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս դոկտ., պրոֆ. Սիմոն Կրկյաշարյանին՝ հանդես գալու հայ մեր պետականության՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետության հաստատման 61-րդ տարեդարձին նվիրված զեկուցումով:

Հարգելի բանախոսը նախ շեշտում է, որ համայն հայ ժողովուրդը, որ ի հայրենիք և ի սփյուռս աշխարհի, այսօր ազգային հղափարության զգացումով և արժանավայել շուքով նշում է իր փառապանծ հոբելյանը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ազգային իր վերածննդյան 61-րդ տարեդարձը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով մեր էջ է բացվում հայ ժողովրդի կյանքում:

Անցյալի ավելի քան վեց հարյուր տարիների բռնությունները, մահաբեր մորիկները, որոնք անցել են մեր երկրի վրայով, չեն կարողացել մարել ողջ հայության սրտում Հույսն ու Հավատը պայծառ ապագայի նկատմամբ:

Երկար ու տառապալից տարիներից հետո, վերջապես, 1920 թվականի նոյեմբերի 29-ին, բացվում է հայ ժողովրդի համար փրկության արշալույսը:

Այնուհետև հարգելի բանախոսը իր զեկուցման մեջ հանգամանորեն կանգ է առնում անցյալ 61 տարիների ընթացքում մշակույթի, գիտության, հայրենաշինության, արդյունաբերության, գյուղատնտեսության և բազում այլ բնագավառներում հայ ժողովրդի ստեղծած հայրենական նվաճումների վրա:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը «ոչ միայն ֆիզիկապես փրկեց հայ ժողովրդին բնաջնջումից և աշխարհի քարտեզի վրա վերահաստատեց Հայաստան տեղանունը, այլև նրան տվեց ազգային վերածննդի, տնտեսական, քաղաքական ու մշակութային քարավաճման լիակատար հնարավորություն:

Մենք ոչ միայն բուժեցինք մեր ծանրաժանր վերքերը, այլև առաջընթացի լայն հնարավորություններ ստանալով, եղբայրական ուս ժողովրդի անշահախնդիր օգնությամբ, կարողացանք յոթ միլիոնաց քայլերով ընթանալ առաջ և կանգնել առաջավոր մարդկության կողքին, տնտեսության և մշակույթի բոլոր ասպարեզներում:

Ո՞րն է մեր հանրապետության անցած 61-ամյա ողորմ հանրագումարը:

Խորհրդային իշխանությունը Հայաստանում 1920 թվականին հին աշխարհից ժառանգություն էր ստացել լիովին քայքայված մի տնտեսություն: Խորհրդային եղբայրական ժողովուրդների օգնությամբ, առաջին հնգամյակների տարիներին մեր հանրապետությունը դարձավ շինարարական հսկա մի հրապարակ: Իրար ետևից լիառուցվեցին մոտավոր գործարան-հսկաներ, էլեկտրակայաններ, ճանապարհներ, ջրանցքներ կենսատու, մեր քաղաքներ և ավաններ: Մեծ զարկ տրվեց մետաղագործությանը և մեքենաշինությանը, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությանը:

Ետպատերազմյան տարիներին մեր թափով զարգացավ մեր հանրապետության արդյունաբերությունը:

Առավել հատկանշականն այն է, որ այս ժամանակահատվածում զգալիորեն ընդարձակվել է մեր արդյունաբերության աշխարհագրությունը: Հանրապետության արդյունաբերական նախկին կենտրոնների՝ Երևանի, Լենինականի, Կիրովականի գործարաններից բացի, հզոր արդյունաբերական միավորներ ստեղծվեցին նաև Արովյանում, Հրազդանում, Չարենցավանում և այլ քաղաքներում:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մենք ինքներս ակնհայտես եղանք հսկայական կառույցների: Մի կողմ թողած մեր նոր քաղաքների գեղատեսիլ շենքերը, լայնահուն փողոցներն ու պողոտաները, մենք իրավամբ հպարտ ենք Հրազդանի գեղատեսիլ ափին քարծրացած հույակերտ մարգագաղառով, փրկարար Արփա-Սևան եզակի ջրատարով: Մենք այսօր կարող ենք իրավագիտորեն հպարտանալ քաղաքակիրթ մարդկության առաջ մեր մայրաքաղաքի մետրոպոլիտենով և այլ փառավոր կառույցներով:

Մեր հանրապետությունում քարձր զարգացման հասավ նույնպես ժողովրդական կրթությունը: Այժմ մեր հանրակրթական դպրոցներում մատաղ սերնդի կրթությամբ ու դաստիարակությամբ զբաղվող մասնագետ ուսուցիչների թիվը մեծապես գերազանցում է անցյալում Հայաստանի թղոր դպրոցներում ընդգրկված աշակերտների ընդհանուր թվին:

Անցյալում քարձրագույն ուսումնական և ոչ մի հաստատություն չունեցող մեր երկիրը այսօր իր 13 քարձրագույն ուսումնական հաստատություններով և շուրջ 60 հազար ուսանողներով այդ ասպարեզում առաջ է անցել շատ այլ երկրներից: Եթե անցնա՞նք ուսումնաստե՞նք թայ ներիտասարդները ստիպված էին, այն էլ հնարավորության դեպքում, սովորելու համար մեկնել արտասահմանյան համալսարաններ, այսօր մեր, Երևանի քարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են ոչ միայն սփյուռքահայ երիտասարդներ, այլև պատկանելի թվով օտար ուսանողներ Միության տարբեր քաղաքներից և արտասահմանյան մի շարք երկրներից:

Այսօր երկրագնդի վրա փոքր մի տարածություն գրադեցնող մեր հանրապետության գիտությունների նվաղեմիսն ունի շուրջ յոթ հազար գիտական աշխատակիցներ: Ակադեմիայի ավելի քան երեք տասնյակ գիտահետազոտական ինստիտուտների աշխատասենյակներում կատարված հայտնագործություններն այժմ ծանոթ են ողջ գիտական աշխարհին:

Անմախընթաց վերելքի ուղիով ընթացավ մեր ժողովրդի՝ դարավոր ավանդներ ունեցող հոգևոր մշակույթը: Նկարչության, երաժշտության, թատերական արվեստի, գրականության ասպարեզում մեր արվեստագետներն ու գործիչները հասան համաշխարհային ճանաչման և համընդհանուր գնահատության:

Առանձնապես կարգացավ ու քարգա-

վանեց մեր ճարտարապետությունը: Հայը միշտ էլ եղել է շինարար, միշտ էլ կառուցել է, սակայն ժամանակը, իր բերած աղետներով, եղել է հայ ճարտարապետ-շինարարի անողոր թշնամին, օտար նվաճողների հետ դաշնակցած ավերել ու քանդել է նրա կառուցածը: Բայց այսօր, խորհրդային եղբայր ժողովուրդների համերաշխ ընտանիքում, հայ շինարարը, ապահով իր ապագայի համար, կառուցում է անվախ՝ շենացնելով ու գեղեցկացնելով իր հայրենի երկիրը: Դեռ ավելին: Հայ ճարտարապետն այսօր ոչ միայն կառուցում է, այլև վերակառուցում մեր անցյալի կիսավեր պատմական հուշարձանները՝ դրանց տալով նոր, երկրորդ կյանք:

Այսօր, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 61-ամյա ժամանակաշրջանի քարձրներից, ատավել նկատելի են մեր ժողովրդի հերոսական սխրանքների հետևանքով ունեցած հաջողությունների հսկայական չափերը: Այդ հաջողությունների համար մեր հանրապետության փողփողուն դրոշի վրա այժմ փայլում են պետական հինգ ջրանշաններ, որոնք խորհրդանշում են հայ ժողովրդի իսկական վերածնունդը:

Հանդիսության ընթացքում գործադրության դրվեց նաև օրվա տոնի խորհուրդը լուսաբանող գեղարվեստական կոկիկ մի ծրագիր՝ քաղկացած արտասանություններից, խմբերգերից և նվագներից:

Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը, երաժշտության դասատու Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի ղեկավարությամբ, սպորտով կատարեց «Հայրենիքիս հետ» (խոսք՝ Հովն. Թումանյանի, երաժշտությունը՝ Ալ. Հարությունյանի), «Գովք Հայաստանի» (խոսք՝ Սարմենի, երաժշտությունը՝ Ստ. Զրբաշյանի), «Հայաստան իմ քաղցրամուն» (խոսք՝ Պարույր Սևակի, երաժշտությունը՝ Լ. Զովհաննիսյանի) խմբերգերը:

Մի քանի ուսանողներ հանդես եկան արտասանություններով: Գ. լսարանի ուսանող Սմբատ սրկ. Արիստակեսյանը արտասանեց Գեղամ Սարյանի «Խորհրդային Հայաստան» բանաստեղծությունը, Ա. լսարանի ուսանող Մկրտիչ Ներսիսյանը՝ Եղ. Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» հանրաժանոթ քերթվածը, Ա. լսարանի ուսանող Հակոբ Մարտիրոսյանը՝ Համո Սահյանի «Երգ Հայաստանի» ստեղծագործությունը:

Ա. լսարանի ուսանող Սարգիս Գուտուգյանը փայլուն կերպով դաշնամուրի վրա կատարեց Ա. Խաչատրյանի «Պոեմ»-ը, Գ. դասարանի ուսանող Հովակիմ Քիլեջյանը,

նույնպես Ա. Խաչատրյանի, «Էտյուդ»-ը:

Հանդիսության ավարտին հոգևոր անմարանի արժանապատիվ տեսուչը հրավիրեց Հայոց Հայրապետին՝ Իր պատգամն ու օրհնությունը տալու օրվա տոնի առիթով:

Նորին Սուրբ օծությունը մախ Իր ուրախությունը արտահայտեց օրվա հանդիսության ծրագրի հաջող կազմության և գործադրության համար, Իր գնահատանքը հայտնեց տեսչին, օրվա բանախոս դասախոսին և գեղարվեստական բաժնի մասնակիցներին:


Հայրենական վերածննդյան այս օրերին, մեզ վեհափառ Հայրապետը, իրենց վերածնունդն են ապրում ման Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ու Մայր Ա-

թոռ Ս. Էջմիածինը «հոգևոր կյանքի զարթոնքով, տասնյակ պատմական հուշարձան վանքերի և եկեղեցիների վերանորոգումով և հատկապես Սուրբ Էջմիածնի անմախքության շքեղացումով:

Փրկչի Իջման Սուրբ Սեդանից և մեր բոլորի արտերից բյուր օրհնություն մեր վերածնված ամենայն հայոց մայր հայրենիքին», եզրակացնում է Վեհափառ Հայրապետը, հանդիսականների հոտնկայս և երկարատև ծափողջույնների ներքո:

Հայաստանում խոփատական կարգերի հաստատման 61-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:





ԱՄԱՆՈՐԻ ԵՐԵՎՈՒՅԹ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գեկտեմբերի 31. հինգշաբթի:

1981 թվականի վերջին օրն է, վերջին երեկոն:

Դատության գիրկն է անցնում Մայր Աթոռի հոգևոր, եկեղեցական, թեմական, մշակութային, կրթական, հրատարակչական, շինարարական և այլ բազում իրադարձություններով հարուստ տարեգրության մի կարևոր էջը և:

1981 թվականը եկեղեցական-ազգային տեսակետից հանդիսացավ հիշատակության արժանի պատմական մի տարի նրանով, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ա. Էջմիածնի օրհնությամբ և Ամենայն Հայոց Հայրապետի արթուն ու անմիջական ղեկավարության ներքո, շարունակեց իր նախախնամական, հոգևոր և պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, թե՛ ի հայրենիս և թե՛ ի տիյուս աշխարհի:

Մայր Աթոռը լայն հորիզոնների մտահովեռումով շարունակեց նաև իր հայրենասիրական առաքելությունը մեր ժողովրդի ծոցում, նրա ազգային գերագույն շահերի քննարկման գիտակցությամբ:

Այս ոգով և այս հաստատումներով է, որ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո ղեկավարվող 31-ին, երեկոյան, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, գլխավորությամբ լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի, Տ. Արսեն, Տ. Նարեկ, Տ. Գևորգ թեմակալ առաջնորդ սրբազանները, Աղբրեջանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Ամանիա վարդապետը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետը սրտի խորը հուզումով հավաքվել էին Դազարապատի միաբանական սեղանատանը՝ ճանապարհելու հին տարին և դիմավորելու 1982 թվականը:

Հանդիսությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամները, մայրավանքի ղեկավար աշխատողները: Այստեղ էին նաև հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը՝ գլխավորությամբ տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանի:

Հոգևոր ճեմարանի ուսանողները հաջողությամբ ավարտել էին 1981—1982 ու-

սումնական տարվա գրավոր և բանավոր կիսամյա քննությունները և գոհունակ սրբտով, խաղաղ խղճմանքով եկել էին բարի ճանապարհ մաղթելու անցնող տարվան և ցնծությամբ, հավատքով, լավատեսությամբ, երիտասարդական եռանդով դիմավորելու մոր տարին, որպեսզի 1982 թվականին նաև կարողանան իրենց ուսումնառության շրջանը ավարտել փայլուն արդյունավորությամբ և իրենց լավագույն երազանքները իրականություն դարձնել:

Ժամը 20-ին Ղազարապատի միաբանական սեղանատունը, ճաշակով ու գեղեցկորեն զարդարված Ամանորի առիթով, զրկաբաց ընդունում է իր հյուրերին: Ողջ սեղանատունը, իր շուրջ 100 հրավիրյալներով, հոտնկայս, ջերմորեն ու ուրախ ծափողջույններով դիմավորում է Հայոց Հայրապետի ժամանումը:

Ամանորի սեղանը, որը պատրաստվել էր Մայր Աթոռի բարիքներով, օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է ճեմարանի քայլերգը:

Ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ջերմագին, ոգեշունչ և հայրենասիրական մթնոլորտ:

Հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Եզնիկ քնն. Պետրոսյանը, շնորհավորելով Հայոց Հայրապետի և բոլոր սեղանակիցների Ամանորը, հանդես է գալիս հետևյալ գեղեցիկ ուղերձով.

«Վեհափառ Տեր,

Ահա մորից Նոր տարի է, խիճի ու բերկրանքի օր: Ամեն ոք անհուն բերկրանքով ու ապագայի նկատմամբ սիրով ու քաջում հույսերով է դիմավորում Նոր տարին:

Թեպետ առարկայորեն դիտված այսօրվա օրը, այսօրվա 24 ժամը ոչնչով չի տարբերվում մյուս օրերից, սակայն ինչպես էլ որ ընկալվի այն, Ամանորը մոր կյանք, մոր ծնունդ է տալիս մարդկանց հոգեկան աշխարհին: Այդ իսկ պատճառով էլ գրեթե ամեն մարդ ցնծություն, խնդություն և անհուն կայստություն է զգում Նոր տարվա սեմին:

Մարդկային կյանքը իր օրհնաչափ ընթացքով առաջ է շարժվում ամեն օր, ամեն ժամ, անդադար:

Միայն Ամանորին է, որ մարդկությունը հին տարվա մայրամուտին և մոր տարվա արշալույսին մի պահ կանգ է առնում հարցնելու, թե ի՞նչ է կյանքը և ի՞նչի՞ համար է այն:

Կյանքի կոչված ամեն մի մարդու առջև նպատակ է դրված՝ հասնելու մի կետի, որն ավելի կատարյալ է:

Այն իրագործելու համար մարդ պետք է կարողանա արդյունավորել իրեն տրված աստվածային շնորհները: Հետևաբար այստեղ հավաքված յուրաքանչյուրիս համար իբրև անհատ, իբրև մի սուրբ հաստատության անդամ, այսօր հաշվետվության օր է: Բնական է, որ ճեմարանի տեսչությունը նույնպես իր առջև դնի այդ հարցը:

Մի ակնարկ նետելով 1981 թ. հոգևոր ճեմարանի կյանքի վրա, ուրախությամբ պիտի նշենք, որ անցյալ տարվա ընթացքում հոգևոր ճեմարանի և ճեմարանին կից քահանայից քաժմի շրջանաժարտներից 8-ը ստացել են քահանայական ձեռնադրություն և օծում, իսկ 4-ը՝ սարկավագական ձեռնադրություն:

Բացի այս, մեկ շաբաթ առաջ, Ս. Ստեփանոսի տոնին, Գ լսարանից 3 ուսանող արժանացան սարկավագական ձեռնադրության, իսկ Ա լսարանից 13 ուսանողների շնորհվեց ուրարակության և Գ դասարանի 16 ուսանողի՝ դպրության աստիճաններ:

Ավարտվեց 1981—82 ուսումնական տարվա առաջին կիսամյակը: Եկել է պահը ամփոփելու անցյալ կիսամյակի արդյունքները և մշակելու եկող կիսամյակում կատարվելիք աշխատանքի ծրագիրը: Եվ, քնականաբար, հաճելի է, որ այս ամփոփման պահը համընկնում է Նոր տարվա հաշվեհարդարի պահին: Ասում են հաճելի, որովհետև նման մթնոլորտում և՛ աշխատանքն է հաճելի, և՛ հաճույքով կատարվող աշխատանքի արդյունքներն են հաճելի լինում:

Վեհափառ Տեր,

Թույլ տվեք, հանուն հոգևոր ճեմարանի տեսչության, շնորհավորել Ձեր Նոր տարին, մաղթել երջանիկ և արգասաբեր Նոր տարի:

Թող 1982 թ. Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համար լինի խաղաղության և մորաճուր հաջողությունների տարի:

Ծնորհավոր Նոր տարի»:

Ճեմարանի երգչախումբը ոգևորությամբ կատարում է Հայրապետական մաղթանքը, որն ունկնդրվում է հոտնկայս և հարգալից լռությամբ:

Ա լսարանի ուսանող ուրարակի Հակոբ Մարտիրոսյանը արտասանում է Գեղամ Մարյանի «Օրացույց» քերթվածը, իսկ Գ դասարանի ուսանող Հովակիմ Քիլեջյանը դաշնամուրի վրա կատարում է «Սոնատինան»:

Ի դիմաց Մայր Աթոռի միաբանության, լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպիսկոպոսը շնորհավորում է Հայոց Հայրապետի Նոր տարին, առողջության և երկարամյա



եկեղեցաշեն ու արտաձվեր զանակալության արտաձին բարեմադրություններով, և առաջարկում է բաժակ բարձրացնել Հայոց Հայրապետի կենացը:

Բոլոր ներկաները հետևկալս մասնակցում են այդ առաջարկին և բաժակ բարձրացնում Հայոց Հայրապետի արեւատուրջան կենաց:

Նոր տարվա ողջույնի և շնորհավորանքի ջերմ խոսք է արում նաև Աղբյուրանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Անանիա վրդ. Արաքսյանը՝ հանուն իր թեմի եկեղեցականության և հայ հավատացյալ ժողովրդի:

Բ. դասարանի ուսանող Ստեփան Պողյանը արտասանում է Գանիել Վարուժանի «Անդաստան» քերթվածը: Երգչախումբը կատարում է Նոր տարվան նվիրված «Վեճաց երգը»: Նույն դասարանի ուսանող Վազգեն Պրաչեդյանը հանդես է գալիս Վահան Թեքեյանի «Աղոթք վաղվան սեմին առջև» քերթվածի արտասանությամբ:

Գլխարանի ուսանող Վարդգես սրկ. Մկրտչյանը, ի դիմաց ուսանողության, ընթերցում է Վեհափառ Հայրապետին ուղղվող որդիական երախտագիտությամբ գրված հետևյալ շնորհավորական խոսքը.

«Վեհափառ Տեր,

Ամեն անգամ Նոր տարվա նվաճումին, բարի մաղթանքներով և շնորհավորանքներով հետո, միշտ հիշենք Պողոս Առաքյալի հետևյալ խոսքերը. «Եվ ոչ մեկին պարտապան մի մնացնեք, բացի միմյանց սիրելուց»:

Այսօր, տարեմուտի այս գեղեցիկ երեկոյին, հավաքված Ա. Էջմիածնի միաբանական սեղանատանը, հրաժեշտ ենք տալիս անցնող՝ 1981 թ. և մեծ ուրախությամբ դիմավորում գալիք՝ 1982 թ.:

Ամբողջ մարդկության պատմության մեջ այս տարին ևս մի ակնթարի է, ակնթարթ, որը ներկայիս մարդկության համար պայմանավորված էր երկար ու կարճ 365 օրերով՝ լեցուն ուրախություններով և հուզումնալից պահերով: Այս է պատճառը, որ լուրաբանչյուր Նոր տարվա շնին, երբ խորհում են անցնող տարվա մեջ կատարված գործերի մասին, ամեն կերպ ցանկանում են վերացնել թերի մնացած գործերը, իսկ լավ գործերին՝ ավելացնել ավելի լավը: Ահա նույն հոգեբանությամբ և տրամադրությամբ են համակված հոգևոր ճեմարանի սաները:

Այդ 365 օրերում հոգևոր ճեմարանը ապրել է իր տեղեկագործական կյանքով. նոր սաներ են ընդունվել ճեմարան, նոր ուսումնական մեթոդներ են առաջարկվել, որոնք իրենց դրական արդյունքն են տվել

ուսման առաջադիմության մակարդակը բարձրացնելու համար: Եվ այդ ամբողջ տարվա ընթացքում հոգևոր ճեմարանը միշտ վայելել է Վեհափառ Հայրապետի ջերմ հոգատարությունն ու հայրական վերաբերմունքը: Թե ինչքանով է Վեհափառ Հայրապետի հոգատարությունն որախացնում ու ջերմացնում մեր սրտերը, այդ անկարելի է բացատրել բառերով, իսկ թե ինչպես մենք պետք է մեր շնորհակալությունը հայտնենք, արդեն հասկանալի է բոլորին՝ մեր լավ ուսմամբ և վարքով:

Թույլ տվեք հավաստիացնել Ձեզ, Վեհափառ Տեր, որ մենք հուսալիս ենք այն Ձերդ Սրբության բարձր վստահությունը, կիցնենք ճեմարանին արժանի իսկական տաներ՝ միշտ բարձր պահելով ոչ միայն հոգևոր ճեմարանի, այլև դարերի խորքից եկող Հայ Առաքելական եկեղեցու պատիվն ու ավանդությունները: Ծնորհակալություն Ձեզ, Վեհափառ Տեր, մեր ներկայումս ունեցած հոգատար վերաբերմունքի և հայրական սիրո համար, որով միշտ շրջապատել ու շրջապատում եք հոգևոր ճեմարանին և ուսանողությանը:

Այս գեղեցիկ օրը ցանկանում եմ ուսանողության անունից շնորհակալական խոսք ուղղել նաև հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին, որոնք իրենց ազնիվ աշխատանքով միշտ նպաստել ու նպաստում են ուսանողներին գիտելիքների հարստացմանը: Սիրելի դասախոսներ, համոզված եղեք, որ ձեր ցանած սերները չեն ընկնում ապատումների ու ճանաչարհների վրա, այլ սերմանվում են պարսրա հողում և տալիս բազում հասկեր, բարի արդյունքներ:

Վերջացնելով իմ խոսքը, վերստին ուսանողության անունից շնորհակալություն ենք հայտնում Վեհափառ Հայրապետին, հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին, ինչպես նաև Մայր Աթոռի ողջ միաբանությանը՝ ի մասնավորի Հուսիկ Սրբազանին և Մամբրե Հայր Սուրբին, որոնք ճեմարանի ուսանողության համար եկեղեցական ծիսակառուության իսկական դասախոսներն են:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, ուսանողության անունից շնորհավորել Ձեր և այստեղ գտնվողների Նոր տարին, մատչել ի համբույր Ձերդ Սուրբ Աչին, առանալով Ձերդ Սրբության հայրական օրհնությունները և բարի մաղթանքները:

Ճեմարանի ազատ ունկնդիր դպիր Ղազար Կարապետյանը (Դրար) արտասանում է Բյուրնսի «Լոմ սիրտը լեռներում է» անգլերեն բանաստեղծությունը:

Մի պահ մարում են սեղանատան զվարթ լույսերը, և մոմերի մեղմ լույսի տակ երգչախումբը կատարում է «Լո՛ւռ գիշեր, սո՛ւրբ գիշեր» Ծննդյան գեղեցիկ երգը:

Գ լսարանի ուսանող Ալեքսան սրկ. Թագայանը ինքնագիր «Կաղանդչեքեր» է ընթերցում ներկաներից ոմանց նվիրված՝ մի պահ խիմոլով ու ծիծաղով լցնելով միաբանական սեղանատունը և բոլոր ներկաների սրտերը:

Խանդավառ մթնոլորտում տեղի է ունենում նաև Նոր տարվա ավանդական վիճակահանություն: Ներկաներից ոմանք մի պահ «բախտավորվում» են իրենց շահած նվերներով:

Տեսուչ Հոր հրավերով, հանդիսության ավարտին, Հայոց Հայրապետը հրավիրվում է Իր օրհնության խոսքն ու նոր տարվա պատգամը տալու Մայր Աթոռի միաբանությանն ու բոլոր ներկաներին:

Ամանորի առիթով միաբանական սեղանատանը կազմակերպված հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված Տերուհանական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 24-ն է: Եվս մի ակնթարթ, և հրնչում են Մայր տաճարի զանգերը գիշերվա խորհրդավոր լռության մեջ: Հնչում են զանգերը 365 անգամ՝ վերջին անգամ վերհիշելու անցած տարվա ամեն մի օրը:

Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի ուսանողությունը Նոր տարվա առիթով իրենց առաջին, լռելայն, ինքնավերջ աղոթքն են անում Մայր տաճարում, որպեսզի նոր տարին լինի խաղաղության, առատության, հայրենիքի բարօրության և ժողովուրդների ի Բրիստոն եղբայրության տարի:

Թող քարո՛վ գա նոր տարին:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ս. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը և «Հայր մեր»-ից սուաջ խոսում հավիտյա պատշանի քարոզ:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 2-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 10-ին, Վեհափառում գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ, որին ներկա էին նաև Ս. Սերուբե և Ս. Շահեն արքեպիսկոպոսները: Հրավիրվել էր նաև Ս. Տիրան արքեպ. Ներսիսյանը, որը զեկուցեց Հայ Եկեղեցու Մահմանադրության նոր նախագծի կազմության համար Մայր Աթոռում համեմատողովի կատարած աշխատանքների մասին:

Նոյեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Մովսիս վրդ. Սարգսյանը և քարոզում «Բայց մեր ամենեցուն

բացառ երեսօր զփառսն Տառն իբրև ընդ հայկի տեսեալ՝ ի նոյն պատկեր նորոգիմք փառաց ի փառս, որպէս և ի Տառն Հոգւոյ» (Բ. Կորնթ. Գ 18) բնարանով:

Նոյեմբերի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կոմարվում է միաբանական ներթական հավաքույթ:

Նոյեմբերի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Նարեկ քնն. Մատարյանը և «Հայր մեր»-ից սուաջ քարոզում՝ խոսելով մկրտության խորհրդի հոգևոր նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նոյեմբերի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհափառում, Վեհափառ Հայ-

րապետի նախագահությամբ, գումարվում է միաքանակյան հերթական հավաքույթ: Բանախոսությամբ հանդես է գալիս Հայկ սրկ. Չիլինգարյանը խոսելով նախաբուրդայական շրջանի հեղկական կրոնական հավատալիքների մասին:

*
* *

Նոյեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ստեփանոս արք. Չաքալյանը և քարոզում «Տեսէք և զգոյշ լերուք զամենայն ազգախոսքէն, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք մորա» (Ղուկ. ԺԲ 15) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհաքանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաքանակյան հերթական հավաքույթ, որտեղ քննության են առնվում Մայր տաճարում խոսված քարոզները, արվում մի շարք թելադրություններ՝ խոսվելիք քարոզների բովանդակության մասին:

*
* *

Նոյեմբերի 28-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

*
* *

Նոյեմբերի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Զատիկ արք. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Նաև զՀանրապետութիւն Հայաստան աշխարհիս, զօրացուցես և պահպանես յամայր ամս ընդ հովանեաւ ամենագոր աշոյ քոյ ի շինութեան, ի խաղաղութեան և յանստանութեան» բնաբանով:

Ս. պատարագի ավարտին կատարվում է Հանրապետական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 61-րդ տարեդարձի առթիվ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

*
* *

Դեկտեմբերի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհաքանում, Վեհափառ Հայրապետի նա-

խագահությամբ, գումարվում է միաքանակյան հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Ստեփանոս արք. Չաքալյանը խոսում է վերջերս իր Հունաստան եղած ժամանակ հունական մի շարք վանքերին և մենաստաններին տված իր այցելության տպավորությունների մասին:

*
* *

Դեկտեմբերի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Եղիշե քհն. Բադրամյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետը Վեհաքանում ընդունում է այցելությունը Երևանի պետական համալսարանի 60-ամյակի առթիվ Երևան ժամանած միութենական հանրապետությունների համալսարանների մի շարք դասախոսների և գիտնականների ու սրտագին մթնոլորտում 9երմ զրույց ունենում նրանց հետ:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհաքանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաքանակյան հերթական հավաքույթ, որի ընթացքում Հայկ սրկ. Չիլինգարյանը խոսում է Բուդդայի և նրա վարդապետության մասին:

*
* *

Դեկտեմբերի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ուղիղ եղիցի աղօթք մեր որպէս խունկ առաջի քո, Տէր» (Սաղմոս) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Հակոբ քհն. Գլոյկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Հայ Եկեղեցու դերի և նշանակության մասին՝ ի մասնավորի հայապահպանման կարևոր գործում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:

Դեկտեմբերի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոցան, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Զատիկ արդ. Ա. վեպիքյանը ներկայացնում է 1980 թվականին հրատարակված բանասեր Քնարիկ Տեր-Դավթյանի «XI—XV դարերի հայ վարքագրությունը» արժեքավոր ուսումնասիրությունը:

Դեկտեմբերի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, Ս. պատարագ է մատուցում Ս. Ղևոնդ քնն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ խոսում հավոր պառնշանի քարոզ:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 28-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում նշվում է հոգևոր ճեմարանի նախկին սան և այժմ ախազ վերականգն բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի ծննդյան 50-ամյակը: Հանդիսության ընթացքում բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դաստիարակ—ուսուցիչ Ստեփանոս արդ. Զարալյանը:

Այնուհետև բանաստեղծի կյանքի, ուսումնասիրության, գրական-ստեղծագործական գործունեության մասին բովանդակալից գեկուցումով հանդես է գալիս ճեմարանի Գ. խորանի ուսանող Վարդան սրկ. Բաղդասարյանը:

Ապա բանաստեղծի մի շարք քերթվածների արտասանությամբ հանդես են գալիս ճեմարանի սաները:

Վերջում իր շնորհակալական խոսքն է ասում հորեկար բանաստեղծը և արտասանում իր անտիպ նոր քերթվածներից:





ՍՈՒՐԲ ԱՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սուրբ Ստեփանոսի տոնը, ի հիշատակումն նախավկա և առաջին մարտիրոսի նահատակության, հանում Բրիտանի և հանում ճշմարտության, ամեն տարի առանձնակի շուքով է նշվում Մայր Աթոռում:

Սուրբ Ստեփանոսի տոնը համարվում է նաև Մայր Աթոռի սարկավագների տոնական օրը և առաջիկա ևս նշանավորվում հոգևոր ճեմարանի Գ լսարանի ուսանողների սարկավագական ձեռնադրությամբ:

Այս տարի նույնպես, հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Եզնիկ քհն. Պետրոսյանի միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի քարեհան կարգադրությամբ, դեկտեմբերի 26-ին սարկավագական ձեռնադրություն են ստանում Գ լսարանի երեք ուսանողներ՝ Վարդգես Մկրտչյանը, Գարուշ Լազարյանը և Կառլեն Պետրոսյանը՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպ. Սանթրուքյանի:

Դեկտեմբերի 25-ին, ուրբաթ օրը, ժամերգությունից հետո, կատարվում է նախատոնակ, Սուրբ Ստեփանոսի խորանի առջև, որից հետո Ս. Հուսիկ արքեպ. Սանթրուքյանը դպրության չորս աստիճաններ է շնորհում Գ դասարանի 13 ուսանողների, ուրար կրելու իրավունք՝ Ա լսարանի 14 ուսանողների, և կիսասարկավագական ա-

տիճան՝ Գ լսարանի երեք ուսանողների:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 26-ին, տեղի է ունենում առավոտյան հանդիսավոր ժամերգություն: «Փառք ի քարձունս»-ի ժամանակ Մայր Աթոռի վեց սարկավագներ, սաղավարտ ի գլուխ և բուրվառներ ի ձեռին, զույգ-զույգ դուրս են գալիս ավանդատնից և խնկարկում Սուրբ Ստեփանոսի խորանի առջև: Հանդիսավորությամբ հնչում են «Նախասարկավագ և առաջին մարտիրոս» և «Ստեփանոս քաղցրիկ տատրակ» մեղեդիները, որով և ավարտվում է արարողությունը:

Ժամը 10.30-ին սկսվում է ս. պատարագը: Օրվա պատարագին է հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ Ս. Ստեփանոս արք. Չաքալյանը:

Սուրբ գրական ընթերցումներով, ըստ ձեռնադրության Մաշտոցի, սկսվում է Գ լսարանի երեք ուսանողների սարկավագական ձեռնադրությունը, որն ավարտվում է ձեռնադրիչ սրբազան հոր «Պահպանիչ»-ով:

Այնուհետև շարունակվում է ս. պատարագը:

«Հայր մեր»-ից առաջ խրատական քարոզ է խոսում պատարագիչ հայր սուրբը՝ հանգամանորեն վեր հանելով Ստեփանոս

ճախարհակազի ճանաչակության հոգևոր հշտնակությունը Եկեղեցու կյանքում, մաղթելով նաև նորընծաներին հաստատակամություն և նվիրում իրենց ուխտի մեջ:

Հավարտ ա. պատարագի Տ. Հուսիկ արքեպ. Սանթրոսյանը և Տ. Եզնիկ քնն. Պետրոսյանը Վեհափառ Հայրապետին են ներկայացնում Մայր Աթոռի ավագ և նորընծա տասը սարկավագներին:

Նորին Արքությունը շնորհավորում է սարկավագների տունը, տալիս Իր հայրական օրհնությունն ու հորդորները՝ մաղթելով, որ նրանք, կրկին վերանորոգված օրվա խորհրդով, իրենց անմնացորդ նվիրումը բերեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայ Եկեղեցու հոգևոր սպասավորության սուրբ գործին:

Վերջում բոլոր սարկավագները աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու նվերները:


Վարդգես սարկավագ Մկրտչյան. ծնվել է 1950 թվականի մայիսի 25-ին Երևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցում: 1973 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական

ֆակուլտետ, որն ավարտել է 1979 թվականին: Նույն թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ. լսարանում:

Գարուշ սարկավագ Լազարյան. Ծնվել է 1955 թվականի փետրվարի 23-ին Երևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Հովհ. Պողոսյանի անվան դպրոցում: 1974 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որն ավարտել է 1979 թվականին: Նույն թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ. լսարանում:

Կառլեն սարկավագ Պետրոսյան. Ծնվել է 1956 թվականի սեպտեմբերի 13-ին Թբիլիսիում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Հովհ. Պողոսյանի անվան դպրոցում: 1979 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Գ. լսարանում:


«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի ավագ և նորընծա սարկավագների տունը և մաղթում, որ նրանք իրենց ազգապետական գործունեությամբ արդարացնեն Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և լինեն «մշակք ստանց ամօրոյ»:





ՄԻ ՊԱՆՔ ԲԱԶԱՆԱՅԱԿԱՆ ՋԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ





ԼՈՒՐԵՐ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵԻՒՑ

Սույն թվականի դեկտեմբերի 12-ին, Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի տոնի առիթով, Արտաշատի Մրգավան գյուղի Ս. Հակոբ եկեղեցում տեղի ունեցավ հանդիսավոր ս. պատարագ: Պատարագիչն էր Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Ս. Հակոբի տոնին նվիրված պատարագին ներկա էին Հայաստանի տարբեր շրջաններից եկած բազում հավատացյալ ուխտավորներ:

Օրվա տոնի առիթով տեղի է ունենում նաև քահանայական ձեռնադրություն:

Պատարագիչ Ս. Հուսիկ արքեպիսկոպոսը, խարտավիականությամբ Ս. Գեղարդ վանքի վանահայր Ս. Եղիշե քնն. Սարգսյանի, Ս. Գեղարդ վանքի համար քահանա է ձեռնադրում հոգևոր ճեմարանի Բ լսարանի սաներից դպիր Աշոտ Պետրոսյանին և վերանվանում նրան Ս. Հակոբ քահանա:

Ս. պատարագին ներկա էին Արարատյան թեմի քահանայից դասը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներ:

Ս. Հուսիկ արքեպիսկոպոսը ձեռնադրությունից հետո խոսում է խրատական մի քարոզ օրվա ձեռնադրության առթիվ և Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի ուսանելի սուրբ վարքագրության մասին:

Ս. Հակոբ նորընծա քահանան Ծնվել է 1956 թվականի հունվարին, Երևանում: 1974 թվականին ավարտել է Երևանի համար 24 երեկոյան միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել հոգևոր ճեմարան: 1980 թվականի դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ:


*
* *

Սույն թվականի դեկտեմբերի 27-ին Աշտարակի Ս. Մարիամե եկեղեցում մատուցվում է ս. պատարագ, որին ներկա էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Արսեն եպս. Բերբերյանը, փոխանորդի փոխանորդ Ս. Գարեգին արք. Ներսիսյանը, տարբեր եկեղեցիներից քահանա հայրեր, ուխտավորներ:

Ս. պատարագը մատուցում է Ս. Կոմիտաս արք. Հովնանյանը:

Այդ օրը լրանում էր Ս. Մարիամե եկեղեցու կառուցման 700-ամյակը: Ս. Արսեն եպիսկոպոսը, «Հայր մեր»-ից առաջ, հավոր պատշաճի քարոզ է խոսում և անդրադառնում եկեղեցու շինության ու դրա կատարած հոգևոր, մշակութային դերին մեր ժողովրդի կյանքում: Ապա կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն եկեղեցի շինողաց»:





ՍՐՏԱԴՈՒՉ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Դեկտեմբերի 20-ին, կիրակի օրը, ս. Վատարագից հետո, Վեհաբանում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը Բուխարեստի հայոց երեւմեի Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանի Իր նախկին և վաղուց արդեն հայրենաբնակ դարձած 45 ուսանողների, որոնք հայրենիքում ստացել էին իրենց բարձրագույն կրթությունը, ընտանիք կազմել հայրենի խաղաղության և ապահովության պայմաններում և միշտ սիրով և երաստագիտությամբ հիշել նաև իրենց ուսումնառության տարիների քաղցր ու անմոռաց օրերը Բուխարեստի հայկական նախակրթարանի սիրելի հարկի տակ:

Սրտատուշ էր, ուսանելի և հուզիչ տարիներ հետո հայրենի հողի վրա և Ս. Էջմիածնի օրհնյալ կամարների ներքո երեւմեի սիրված դաստիարակ-ուսուցչի և Իր սաների հանելի հանդիպումը:

Հանդիպումն սկսվում է Վեհաբանի հարկի տակ սիրալիր զրույցով և ոգնկոշումովը անցրալի ուսանողական քաղցր կյանքի հիշողություններին:

Ընդունելության ժամանակ, հանուն ներկաների, հետևյալ հուզիչ ուղերձն է կարդում ալժմ արդեն Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանջյանը.

«Մեր թանկագին և շատ սիրելի Ուսուցիչ,

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա,

Բուխարեստի Միսաքյան-Քեսիմյան երեւմեի ազգային վարժարանի Ձերդ Սրբությանը աշակերտած հայրենաբնակ մի խումբ նախկին սաներս, այսօր անսահման ուրախությամբ կիտության ի սրտե շնորհավորել Ձեզ, Ձեր գաճակալության 26-ամյա բարերաստիկ տարեդարձի առթիվ ու կրժաղթենք արկշատություն և նորանոր սրբաբաններ Ձեր եկեղեցւաշեն և հայրենամօլեր թեղմնավոր գործունեությանը:

Մեր հետագա ուսումնառության տարիներին թեև շատ վաստակավոր ուսուցիչներ ենք ունեցել, սակայն Ձեր հմայքն ու մեզ քաշխած հայրենասիրական և մարդասիրական գերագույն պատգամները հավետ անմոռանալի են մնացել մեր մեջ:

Այսօր ավելի քան քառորդ դար է անցել այն օրից, երբ Դուք իբրև ումիմահայ գաղութի արժանավոր զավակն ու պարձանքը, իբրև ազգընտիր գաճակալ, եկար քաղմելու Լուսավորչի 1700-ամյա Միածնաէշ գահին: Սակայն ո՛չ ժամանակը և ո՛չ էլ մեր համետ ումերը ի վիճակի են համահայկական նոր զարթոնքին Ձեր քերած քաջատիկ նպատուր քավարար չափով ուրվագծելու: Այդ անպայման կկատարվի հանգամանալից կերպով մոտ ապագայում, Օրժանյանական «Ազգասպատումի» նոր հավելվածական հատորում:

Այս առթիվ, սակայն, հարկ է ընդգծել, որ իբրև Էջմիածնի գահին աստվածատուր



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒՆԱՐԵՍՏԻ ՄԻՍԱՔՅԱՆ-ՔԵՍԻՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՅԺՄ ՀԱՅՐԵՆԱԲՆԱԿ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՎ
(1981 դեկտեմբերի 20, Վեհարամի այգում)



Հայրապետ, Դուք Ձեր 26-ամյա գործունեության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատմության մեջ դարակազմիկ մի ուկյա շրջան ստեղծեցիք՝ շնորհիվ Ձեր կողմից առատորեն բաշխված Ձեր հոգու և մտքի բազմակողմանի գանձերի:

Դուք իր առաքելության բարձրակետին հասցրիք Հայ Եկեղեցին: Ձերդ Սրբության ամենօրյա հոգատարության շնորհիվ նոր վերելք ապրեց Էջմիածնի միաբանությունը, ամուր հիմքերի վրա դրվեցին հոգևոր ճեմարանն ու հայրենասեր հոգևոր պաշտոնյաներ պատրաստելու գործը: Ձեր բարձր հովանավորությամբ հրատարակվող Մայր Աթոռի պաշտոնաթերթը «Էջմիածին» հանդեսը և մամուլանդ նրա բացառիկ համարներն ու մատենագիտական գործերը նպաստեցին նաև հայագիտության զարգացմանը: Ձեր թելադրությամբ է, որ լույս տեսան Նոր Կտակարանի արևելահայ և արևմտահայ աշխարհաբարի թարգմանությունները, մեծ տպաքանակով: Նշանակալից եղան նաև Ձեր ուղևորություններին նվիրված ուղեգրական հատորները, որոնք կարևոր ատաղձ են դառնալու նաև Հայ Սփյուռքի պատմության ապագա հետազոտողի համար:

Ծանաշողական և գիտական նշանակություն ունեցան Ձեր անմիջական նախաձեռնությամբ արտասահմանում լույս տեսած «Հայկական եկեղեցիներ», «Հայկական խաչքարեր» և այլ բնույթի ալբոմները: Դարձյալ Ձեր արվեստագետի հոգու անմիջական ցոլացումը հանդիսացան հայության գոյատևման անհատը գորաբանակի՝ Մեսրոպյան Այբուբենի և նույնքան փառավոր խաչքարի ոսկեկուռ և թանկագին քարերով ընդելուզված սքանչելի աշխատանքները և գորելենի համար պատրաստված «Իջման տեսիլք», «Հայոց Այբուբեն» և «Վարդանանք» հոյակապ գործերը: Զի կարելի մոռանալ նաև Վեհաբանում հիշարժան տարեթվերի առթիվ Ձեր հոգատարությամբ կազմակերպված գիտական, գրական և երաժշտական սքանչելի երեկոները:

Դուք արժանի կերպով ստացաք Ծիանարար Հայրապետի պատվանունը, քանի որ Ձեր անմիջական նախաձեռնությամբ նոր կյանք ստացան Մայր Աթոռի և նրա մերձակա մեր հոյակապ մյուս կոթողները, որպեսզի կարողանան դիմագրավել եկող դարերին: Ավելին, նոր հոյակապ կոթողներ ևս կյանքի կոչեցիք. Նոր Վեհաբանն ու «Հայկաշեն»-ը, վանատուն-հյուրանոցը և Մայր Աթոռի նոր թանգարանը:

Հայ պատմության ամենաերջանիկ Հայրապետը եղաք, քանի որ, գործելով հայ պետականության գոյության պայմաններում, կարողացաք ոսկե կամուրջ ստեղծել Էջմիածնի ու հայրենիքի և Հայ Սփյուռքի միջև:

Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիսացաք, որ հնարավորություն ունեցավ այցի գնալու իր սիրելի հոսիմ ի սփյուռս աշխարհի: Գաղութից գաղութ սեր և միություն քարոզեցիք և հավատ ներշնչեցիք դեպի հայ ժողովրդի ապագան, այդպիսով Ձեր մեծ նպաստը բերելով օտար ասիերում հայը հայ պահելու վսեմ գործին: Ձեր տարածած լույսն է, որ շերմացրել է բովանդակ հայության սիրտը և անքակտելի կերպով կապել Ս. Էջմիածնի ու Հայոց մայր երկրի հետ: Ծառերը Ձեր շնորհիվ է, որ ճանաչեցին հայրենիքը, և անգամ մեծ թվով օտարներ այցի եկան՝ տեսնելու Էջմիածինն ու Հայաստանը: Ավելին, Ձեր այցերի ժամանակ հաճախ է, որ առիթ ունեցաք տեսակցելու արտասահմանյան բազմաթիվ երկրների հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան ղեկավարների հետ և դրանով մեծ նպաստ բերեցիք աշխարհով մեկ հայասիրության տարածմանը և խաղաղության ամրապնդման կարևորագույն գործին:

Հայաստանում և Սովետական Միությունում ու արտասահմանում բազում պետություններից Ձեր ստացած բարձր պարգևներն ու շքանշանները լավագույն ապացույց են Ձեր վայելած մեծ հեղինակությանը նաև միջազգային չափանիշով:

Թանկագին Ռուսոցի, վերոհիշյալներով երբեք էլ չեն ավարտվում Ձերդ Սրբության 26-ամյա փառավոր մեծագործությունների թվարկումը: Մեզ հայտնի է, որ Դուք դեռևս մեծ առաքելություններ ունեք կատարելու՝ հանուն մեր ժողովրդի լուսավոր ապագայի:

Մեր անգին Ռուսոցի, Բուխարեստի հայրենաբնակ, ինչպես նաև աշխարհի չորս ծագերում ցրված Ձեր հազարավոր ավագ աշակերտների անունից ի սրտե բարեմաղթում ենք Ձեզ քաջառողջություն և երկար կյանք՝ ի կատար ածելու համար Ձեր մյուս բոլոր գեղեցիկ մտահղացումները ևս՝ ի փառս հայ ժողովրդի և հայ մշակույթի»:

Այնուհետև ներկաներից ոմանք նույնպես իրենց սրտի երախտագիտության քաղցր խոսքն են ասում այս առթիվ, այդ թվում մամուլանդ՝ Հակոբ Առաքելյանը և Ավետիս Փոլադյանը:


Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետի նախկին ուսանողուհի և այժմ արդեն Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիս-

տունի Վարդունի Վարդերեսյանը հանդես է գալիս Սրամանթոյի և ռումին բանաստեղծ Միքայել Էմինեսկուի մի շարք թերթվածների արտասանություններով: Բոլոր ներկաները մի պահ նորից վերապրում են իրենց ուսանողական կյանքի քաղցրությունները, երբ հաճախ կազմակերպվում էին նման գրական հանդիսություններ, ամուսնի երեկոներ՝ դեկավարությամբ իրենց դաստիարակ-ուսուցիչ Անն Կարապետ Պալեյանի, որ այժմ Հայոց Հայրապետն է:

Հանդիպման ավարտին խանդավառ մթնոլորտում օրհնության Իր խոսքն է ասում երբեմնի Իր աշակերտներին Հայոց Հայրապետը՝ մաղթանքներ կատարելով նրանց բնտանեկան և հայրենական կյանքում:

Սույն հանդիպումը անցնում է ջերմ և հուզիչ մթնոլորտում՝ մի անգամ ևս իրար կապելով սրտերը երբեմնի Դաստիարակ-Ուսուցչի և Իր սիրելի ուսանողների:





ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆ, ԾՐՋԱՆԱՎԱՐՏ՝ ԱԹԵՆՔԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ուրախությամբ ողջունում է Մայր Աթոռի միաբան արժանապատիվ Տեր Եզնիկ քահանա Պետրոսյանին, որ մա 1980—1981 ուսումնական տարում փայլուն հաջողությամբ ավարտել է Աթենքի ազգային և կապոդիստրիայի անվան համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը «շատ լավ» գնահատականով և ստացել համապատասխան դիպլոմ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը այս փայլուն հաջողության առիթով ջերմորեն և սիրով ողջունում է Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանին ու նրան բարեմաղթում նորանոր հաջողություններ՝ իր ապագա եկեղեցական, կրթական-հաստիարակչական և գրական-բանասիրական գործունեության մեջ:

Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանը, ավագանի անունով՝ Սամվել, ծնվել է 1955 թվականի հունվարի 19-ին Թբիլիսիում: 1958 թվականին ընտանիքով փոխադրվել է Երևան և 1961—1967 թվականներին սովորել համար 82 միջնակարգ դպրոցում:

1967 թվականին մա ընդունվել է հոգևոր ճեմարան: 1972 թվականի դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ եպս. Սանթրուրյանի:

1973 թվականին ավարտել է ճեմարանը բացառիկ հաջողությամբ: Ավարտաճառի նյութն է եղել՝ «Մովսես վրդ. Երզնկացու «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ

պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատությունը (ուսումնասիրություն, բնագիր, հավելված): Սույն ավարտաճառի «ուսումնասիրություն» բաժինը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի Թ և ԺԱ համարներում:


1973 թվականի հուլիսի 22-ին Սամվել սարկավագը Ս. Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած և այժմ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, և անվանվել Տ. Եզնիկ քահանա:

1975 թվականի աշնանը մա «գերազանց» գնահատականով պաշտպանել է վարդապետական ավարտաճառը որի թեման է եղել՝ «Մովսես վրդ. Երզնկացու դավանաբանական գործերը» (ուսումնասիրություն և բնագրեր): Սույն աշխատությունը մույնպես տպագրվել է «Էջմիածին» ամսագրում, 1974 թվականի Թ, Ժ, ԺԲ, 1975 թվականի Ա և Գ համարներում:

1976 թվականի հունվարի 19-ին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, մեկնել է Աթենք՝ իր աստվածաբանական ուսումը շրունակելու տեղի համալսարանում:

1980 թվականի աշնանը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Տ. Եզնիկ քահանա նշանակվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ:





ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅՈՑ Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ—ՍՐԲՈՑ
ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՇԵՄԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԸ

Նոյեմբերի 15-ին, կիրակի օրը, Մարսելի հայոց Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցում հանդիսավորությամբ նշվել է նույն եկեղեցու շինության և օծման հիսուսամյակի հոբելյանը՝ նախագահությամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Ս. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

Վաղ առավոտյան Մայր եկեղեցին և շրջակայքը լեցվել էր հավատացյալների խտուններով քաղմությամբ՝ օրվա տարեդարձի և հոբելյանի առիթով:

Եկեղեցու դասերում տեղ էին գրավել, Մարսելում Հայրապետական պատվիրակի փոխանորդ Ս. Հակոբ եպ. Վարդանյանի գլխավորությամբ, Մարսելի արվարձանների բոլոր եկեղեցիների հոգևորականությունը, թաղականության ներկայացուցիչները, Նիսի, Լա Սիդայի և Փարիզի, ինչպես նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչները:

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է Ս. Սերովբե արքեպ. Մանուկյանը: Ս. պատարագի արարողությունը կատարում է Մայր եկեղեցու երգչախումբը:

«Հայր մեր»-ից առաջ Ս. Հակոբ եպ. Վարդանյանը Ավագ խորանի թեմից հանդիսավորապես ընթերցում է Հայոց Հայրապետի հոկտեմբեր 13 թվակիր հետևյալ սրբատառ կոնդակը՝ նվիրված Ս. Սահակ—Ս. Մեսրոպ—Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցու շինության և օծման հիսուսամյակին:


ՄԱՐՍԵԼԻՈՑ Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ—ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՑ
ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՌՆԵՐՈՒՆ,
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ, ՀՈԳԱՔԱՐՉՈՒԹԵԱՆ
ՅԱՐԳԱՐԺԱՆ ԱՆԳԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆ ՀԱՌԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ
ՀԱՐԱՋԱՑ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶԵՄԻԱՇՆԻ ՈՂՋՈՐՑՆ
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱԳԵՏԱԿԱՆ

Մարտիկա

Ողորմութեամբն Աստուծոյ ամենակալին, լրացան յիսուն տարիները Ս. Սահակ—Ս. Մեսրոպ—Սրբոց Թարգմանչաց ձեր Մայր եկեղեցու կառուցման և օծման, որ առկա քան հինգ տասնամեակներ ծառայեց հոգեշին գործունեութիւն, ի մխթարութիւն և ի հոգևոր լուսաւորութիւն մեր հաւատացեալ ժողովուրդի:

Յօրեկեան մըն է աչս, որ կը հանդիսանայ ձեր հոգևոր յաղթանակը Ֆրանսայի հիւրընկալ քրիստոսաւեր ժողովուրդի ծոցին մէջ: Յօրեկեան մը, որ ճշմարիտ աւետիս մըն է նաև համայն մեր եկեղեցիին և յատկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար:

Երկնային օրհնութիւն կը հալցենք Մարտիկոյ թեմի հոգևոյս առաջնորդ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Պալագեանի և ազգային բարերար լուսարմակ Վահան Խորասանջեանի անբառաւ յիշատակին, որով-



ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ



հետև առաջինի անխնայ ջանքերում շնորհիս և երկրորդի իշխանական նուիրատվությամբ, յիսում տարի առաջ կառուցուեցաւ ձեր աղօթքի Տունը, այժմու Մարսիկիս քաղաքի զարդերէն մին:

Այս երջանիկ առիթով անհունօրէն մխիթարուած, սիրով կ'ընդառաջենք Արեւըտեան Երոսպայի հայրապետական պատուիրակ և Ֆրանսայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Սերովքե արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեան և ձեգի ամենուր կը բերենք Մեր հայրապետական օրհնութիւնը և սրտաբոխ մաղթանքները, որ Տէրը միշտ անասան, միշտ շէն, միշտ լուսառատ պահէ ձեր Մայր եկեղեցին, որպէսզի անոր Սուրբ Սեղանէն երկնային շնորհները առատապէս բաշխուին ձեզի ամենուր, ձեր զաւակներուն և գաղիք սերունդներուն, ի փառս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ:

«Ջխաղաղութեան զհետ երթաք ընդ ամենեսին և զարթութեան, առանց որոյ ոչ որ տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14): Ամէն:

Վազ Գե

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 28 հոկտեմբերի

1981 Փրկչական ամի,

և ի տումարիս Հայոց ՌՆԼ

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ՀՄՐ. 1085

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո պատարագիչ արքազանը խոսում է իմաստալից և հոգեշունչ քարոզ՝ նշելով Ս. Սահակ—Ս. Մեսրոպ—Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցու շինության կարևորու-

թյունը Մարսելի հայոց եկեղեցական, մշակութային և ազգային կյանքում:

Ս. Սերովքե արքեպ. Մանուկեանը մասնավոր կարևորությամբ ապա վեր է հանում եկեղեցու շինության գործում մասնորդ հայրապետական պատվիրակ լուսահոգի Ս. Գրիգորիս եպս. Պալաքյանի անձնվեր ջանքերն ու շինարարական նախաձեռնողի ոգին, որոնց շնորհիվ վեց տարիների ընթացքում, 1928—1934 թվականներին, գլուխ են բերվում Մարսելի հայոց Ս. Սահակ—Ս. Մեսրոպ—Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցու և Նիցցայի հայ եկեղեցին:

Մարսելի հայոց Ս. Թարգմանչաց Մայր եկեղեցին կառուցվում է նվիրատվությամբ ազգային բարերար լուսահոգի Վահան Խորասանձյանի:


Մայր եկեղեցու շինության ճարտարապետն է Արամ Թահթանյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է մասնավոր հոգեհամգիստ՝ Ս. Գրիգորիս եպս. Պալաքյանի և ազգային բարերար Վահան Խորասանձյանի հիշատակին:

Ապա եկեղեցուն առընթեր Մշակութային Տանը, Արծրուն Զորաշյանի անվան սրահում, տեղի է ունենում հանդիսություն՝ նաշկերույթ, որի ընթացքում Մայր եկեղեցու Վարչության անդամ Զարմայր Ալեքսանյանը իր երկար տարիների ծառայության համար արժանանում է Վեհափառ Հայրապետի կոնդակով «Ս. Ներսէս Ծմորհայի» շքանշանի:

Մարսելի հայոց Ս. Սահակ—Ս. Մեսրոպ—Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցու շինության և օծման հիսունամյակի առիթով՝ սույն տեղեկությունները քաղվեցին տիար Հակոբ Վարժապետյանի՝ խմբագրության ուղղած թղթակցությունից, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:





ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 60 ՏԱՐԻՆ

Լրացավ Հայաստանի մայր կրթօջախի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 60 տարին:

Երբ մտովի մի հետադարձ հայացք ենք գցում դեպի մեր պատմական ու հերոսական անցյալը, անվերան կերպով հաստատում ենք, որ մեր բազմաշարժար ժողովրդի գավակները դարերի տառապանքին, ողբ ու ավերին, ճնշմանն ու թալանին զուգահեռ, տևապես տառապել են նաև ուսման, գիր ու դպրության ծառավով:

Իրապես, հայ ժողովուրդը ուսումը սիրող ժողովուրդ է եղել: Այդ են վկայում մեր նախնիներից որպես սրբազան մատուցե հառաձ Մատենադարանի հազարավոր ձեռագիր մատյանները, մատյաններ, որոնք պատմում են հայ միջնադարի գրականության, լեզվի, իմաստասիրության, մանրամարչության և մշակութային այլ ճյուղերի հարուստ ու ինքնատիպ արժեքների մասին: Այդ արժեքներն արդեն իսկ իրենց արժանի տեղն ունեն համաշխարհային մշակույթի անդամատանում:

Եզնիկ Կողբացի, Գալիթ Անհաղթ, Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսես Շնորհալի, Թորոս Ռոսլին, Ս. Գրիգոր Տաթևացի, — անսահման մի համատեղություն, որի յուրաքանչյուր անդամը կարող է մի լուսաստղ նկատվել նաև համաշխարհային մշակույթի ֆոնի վրա:

Եվ երբեք պատահական չէ, որ մեր ազգը թշնամու արյունոտ սրին միշտ էլ դեմ է արել իր ստեղծագործ ոգին, իր գիրն ու դպրությունը՝ որպես անխոցելի վահան:

Շնորհիվ իր անկտորում ոգու, շինարար ձևերի ու ստեղծագործ մտքի, անցյալում երբ թշնամիները քանդում էին, մեր ժողովուրդը նորից էր հիմնադրում, ավերում էին, նա վերստին էր կառուցում, կրա-

կին էին տալիս, նա նորից ստեղծագործում էր ու գրում:

Պատմական նմանօրինակ դառնաճեղ պայմաններում ուսումնառենք հայը միշտ էլ զգացել ու տեսիլքն է ունեցել սեփական կրթօջախի անհրաժեշտության: Եվ ձգտումի այդ ազնիվ ճանապարհին նա հիմնադրել է Սյունյաց, Տաթևի, Սանահինի, Գոշի, Խորվիրապի, Գլաձորի և բազում այլ կրթական ու գիտական օջախները, որտեղ թրծվել են հայ գիտության ու մշակույթի շատ շնորհալի մշակներ:

Կրթական այդ փառավոր ուսումների դարավոր մեծ ավանդն ու փորձն էր, որ Հայոց նոր ու վերածնված հայրենիքում, քաղաքամայր Երևանի սրտի վրա, երկնեց ու ծնեց նորովի պետական մի համալսարան:

Միջնադարի հայ կրթության լուսավորիչներ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ Պարթևի, Մխիթար Հերացու, Մխիթար Գոշի, Վարդան Արևելացու, Ներսես Մշեցու և Եսայի Նշեցու, Գրիգոր Տաթևացու և շատ ու շատ երախտավորների նվիրական առաքելությունը շարունակելու համար էր, որ 1921 թվականին մայր հայրենիքին գրեթե հասակակից նորածնունդ համալսարանը սկզբնական դժվարին պայմաններում, լավատեսության մեծ ուժով ու ապագայի վստեղությամբ, իր թևերի տակ առավ ժամանակի հայագիտության շատ ու շատ ակադավոր մշակներին:

Գիտա-մանկավարժական իրենց հարուստ փորձը հայ նոր սերունդներին անմնացորդ կերպով ջանքեցին համալսարանի առաջին պրոֆեսոր, գիտնական դասախոսներ Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Առն, Գրիգոր Ղափանցյանը և շատ-շատեր:



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԾՆՔԸ



Եթե վաթսուն և ավելի տարիներ առաջ ուսումնաստենէ հայը բարձրագույն կրթություն ստանալու համար ստիպված էր, այն էլ մեծ դժվարություններով, բախել Պետերբուրգի, Մոսկվայի և արևմուտքի այլ համալսարանների դռները, այսօր հայ ուսանողը հյուրընկալորեն բաց է անում իր հայրենի համալսարանի լսարանները:

Այսօր հայրենի մայր համալսարանում բարձրագույն կրթություն են ստանում նաև բազմաթիվ սփյուռքահայեր և ավելի քան քսանվեց երկրների հարյուրավոր այլազգի պատանիներ ու աղջիկներ:

Անցնող վաթսուն տարիների ընթացքում համալսարանի շեմից երկյուղածությամբ ոտք են դրել տասնյակ սերունդներ, որոնք կրթվել, հասունացել և գիտելիքների հարուստ պաշարով կյանք են մտել:

Համալսարանը դեռ երիտասարդ է: Վեց տասնամյակի երիտասարդ պատմություն ունի գիտական այս կրթօջախը: Եվ երբ նրա վաթսունամյա ջանքերից ետևադարձ հայացք ենք անում դեպի նրա անցյալը, կրկին ու կրկին համոզվում ենք, որ շատ կարճ ժամանակահատվածում համալսարանը կատարել է աննախադեպ ու անկարելի: Դա անշուշտ լավագույն առհավատչյալն է միաժամանակ հայոց անցյալի դարավոր, հարուստ կրթափորձի:

Վստահ կարող ենք ասել, որ որքան շրոայլ է եղել ցանքը, նույնքան և ավելի առատ ու բարի է հունձը համալսարանի վաթսուն տարիների: Այդ ընթացքում համալսարանի լսարաններից ծնվեցին բազում ականավոր մշակներ, գիտության ամենատարբեր բնագավառների. լեզվաբաններ ու գրականագետներ, բանաստեղծներ ու արձակագիրներ, պատմաբաններ ու փիլիսոփաներ, արևելագետներ ու աշխարհագրագետներ, տնտեսագետներ ու իրավագետներ, մաթեմատիկոսներ ու ֆիզիկոսներ, աստղագետներ ու քիմիկոսներ, կենսաբաններ ու երկրաբաններ...

Մեծ է նաև Երևանի պետական համալսարանի դերը ազգային մտավորականության ծնունդի, կազմավորման և ժողովրդի

մշակույթի զարգացման գործում: Այսօր համալսարանի հետ են կապվում աշխարհահռչակ շատ անուններ, որոնք նվաճել են համաշխարհային գիտության գագաթները:

Ծուրջ ութ հազար ուսանող և ութ հարյուր վաթսուն դասախոս՝ ահա այսօրվա համալսարանը, որը իրապես դասվում է Միության լավագույն կրթօջախների շարքը:

Համալսարանի վաթսուն տարիների արդյունավետ աշխատանքի լիիրավ գնահատման ու արժեքորման համար էր, որ սույն թվականի դեկտեմբերի 8-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքում տեղի ունեցավ ուսումնական այդ հաստատության հոբելյանին նվիրված հանդիսավոր միստը:

Հանդիսությանը ներկա էին Հայաստանի կառավարության անդամները, համալսարանի պրոֆեսորներն ու դասախոսները, ուսանողներն ու շրջանավարտները, Հայաստանի գիտության և մշակույթի գործիչները, աշխատավորներ և հյուրեր եղբայրական հանրապետությունների համալսարաններից ու կրթական-գիտական կենտրոններից:


Հանդիսության բոլոր մասնակիցներն էլ ըստ արժանվույն գնահատեցին համալսարանի վաթսուն տարիների անցած փառավոր ուղին: Նրանք միաձայն հաստատեցին, որ Երևանի պետական համալսարանը այն առաջատար գիտական օջախն է, որը մեծ դեր է խաղացել Հայաստանի գիտության և մշակույթի զարգացման համար: Այսօր համալսարանի շրջանավարտ մասնագետները հայտնի են ոչ միայն մեր երկրում, այլև ամբողջ աշխարհում:

Այնուհետև բարի մաղթանքներ կատարվեցին համալսարանի ուսումնա-դաստիարակչական ծրագրերի նոր հաջողությունների և նորնոր նվաճումների ու ձեռքբերումների համար:

Թող հավետ ծաղկի ու հավերժ ապրի հայոց 80-ամյա մայր համալսարանը:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ





ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՊԵՏՐՈՍ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՎ ԹԵՈՓԻԼՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԻՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

313 թվականին Միլանոյում, Միլվեյան կամուրջի մոտ, Միգն Կոստանդիանոս կայսրի վճռական հաղթանակը քաղաքական իր թշնամիների դեմ, հանդիսացավ միաժամանակ եկեղեցու կյանքում շրջադարձային կարևոր մի իրադարձություն:

Այդ հաղթանակով վերջ էր գտնում արևմուտքում հերթանոս Հռոմի կայսրությունը և սկիզբ էր առնում քրիստոնյա կայսրության շրջանը՝ և՛ արևմուտքում, և՛ արևելքում: Կոստանդիանոսը դառնում է Հռոմեական նոր ու միացյալ մեկ կայսրության հիմնադիրը:

Եկեղեցու գոյության և առաքելության դեմ Ա—Դ դարերում կայսրության մղած պետական հալածանքները չկարողացան ջլատել եկեղեցու ներքին կենսունակությունը: Եկեղեցին շարունակում էր ապրել, կազմակերպվել և ամրապնդվել լիակատար կյանքով:

Եվսեբիոս Կեսարացի եկեղեցական

պատմիչը (263—340) Դ դարի առաջին քառորդում Հունա-Հռոմեական կայսրության սահմաններում Կոստանդիանոսի օրով եկեղեցու արտաքին դրության մեջ ստեղծված հիմնական փոփոխությունը համարում է կայսրության փրկությունը քերող մի նոր վարդապետություն, որպես նշմարիտ մի ճառագայթ, որը փայլում էր ողջ հին աշխարհում՝ և «ամենաբար էր այլևս այդ ճառագայթի լույսը հանգցնել»:

Եվսեբիոս Կեսարացին իր վերոնիշյալ «Պատմություն եկեղեցական» աշխատության վերջին՝ Ժ «դպրություն»-ը նվիրել է Կոստանդիանոսի հրովարտակին, եկեղեցու կյանքում դրա ունեցած պատմական նշանակությանը և «վասն խաղաղության և որ տուա մեզ յԱստուծոյ, վասն նորոգ շինութեան եկեղեցեաց, վասն տօնից ճառակառեաց եկեղեցեաց որ ընդ ամենայն տեղիս, վասն յաղթութեան Կոստանդիանոս և առ ի նմանէ եղելոցն ընդ ամենայն իշխանութիւն Հռովմէական պետութեան»:

Դ—Ե դարերում, ստեղծված նոր պայմաններում, հրապարակ են իջնում Եկե-

¹ Ընդհանուր եկեղեցական պատմություն, Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, Ա. Էջմիածին, 1908, էջ 223:

² Գրոթ. Ն. Սազարդա, Հույն-Արևելքի հին աստվածաբանական գիտությունը լուր ծաղկման շրջանում (IV—V դ.), ռուս. թարգմ. Ալտակ վարդապետ Սմբատյան, Վաղարշապատ, 1910, էջ 3: Նաև Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 225:

³ Եվսեբիոս Կեսարացի, Պատմություն եկեղեցական..., Վենետիկ, 1877, II դպրություն, էջ 3:

⁴ Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 225:

⁵ Եվսեբիոս Կեսարացի, նույնը, դպրություն տասնևերորդ, Թ՝ գլուխ, էջ 717—761:

դեցու նշանավոր հայեր, մեծ դավանաբաններ, գիտնականներ, մտածողներ, որոնք իրենց հոգու բոլոր ուժերը կենտրոնացնում են Եկեղեցու ներքին հարցերի լուծման, ուղղափառ հավատի դավանության պաշտպանության, հեթանոսության և հերետիկոսությունների դեմ գաղափարական պայքարի վրա:

Այիգը է առնում Ընդհանրական Եկեղեցու պատմության մեջ եկեղեցական բազմաժանր և հարուստ մատենագրության ուկեղարը «աստվածաբանական գիտության զանազան ճյուղերի մեջ», մի շրջան, «որը կլսակն նշանակություն է ունեցել Եկեղեցու պատմության մեջ, և ոչ մի շրջան դրա հետ համեմատվել չի կարող»⁶:

Այս իմաստով Ալեքսանդրիայի Աթոռի հայրապետները Դ—Ե դարերում կարևոր ու վճռական դեր են կատարել ուղղափառ «հաւատոյ պաշտպանութեան»⁷ քրիստոնեական մշակույթի, գիտության, մտածողության զարգացման գործում, որպես ուղղափառության պաշտպան:

Մինչև Ե դարի կեսը դավանաբանական ուսումնասիրության մեջ առաջնորդող նշանակությունը պատկանում էր Ալեքսանդրիայի աստվածաբանությանը⁸:

Ալեքսանդրիան նշանավոր էր նաև հնում որպես կրթության, ուսման քաղաք, նշանավոր՝ իր հռչակավոր գրադարանով, իր դպրոցներով: Այս քաղաքում էր, որ Ա դարից սկսած Եկեղեցին շինման մեջ մտավ հելենիստական մշակույթի և քաղաքակրթության հետ, քան մի այլ մայրաքաղաքում, արևելքում և արևմուտքում:

Հունական հանճարի ուժը օգնում է քրիստոնեությանը դառնալու ոգեկան հզոր մի ուժ, նույնիսկ գոհացնելու համար հեթանոս զարգացած միտքը: Դարձյալ Ալեքսանդրիայում էր, որ բարձրագույն իմաստության ձգտումը և նոր ծաղկող աստվածաբանական հետազոտությունները վտանգ էին ստեղծում մանավանդ հավատի մաքրության և ուղղափառության համար: Ալեքսանդրիան այս պատճառով հանդիսացավ հայեցողական վարդապետության, դավանաբանական/ հակաճառությունների, «հաւատոյ» բանաձևերի, Աստվածաշնչի այլաբանական մեկնությունների կենտրոն, հակառակ Եկեղեցու առաքելական ու ավանդական ուսմունքի:

Ալեքսանդրիան էր, որ միաժամանակ հանդիսացավ օրորանը մեծ ու վտանգավոր հերետիկոսությունների: Նույնիսկ Ա-

լեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի ուսանողների մեջ բաժանում և երկպառակություններ սկիզբ առին, աստվածաբանական, դավանաբանական սկզբունքների և փիլիսոփայական տարբեր սիստեմների շուրջ: Ստեղծվեցին «աշակողմյան և ձախակողմյան» աստվածաբանական և փիլիսոփայական դպրոցներ և ասպարեզ իջան բոլորովին միմյանց հակառակ դավանաբանական հայացքների տեր մարդիկ, որոնց ուսմունքի մեջ միություն չկար: Այդ տարաձայնությունները պատմական, գիտական ու գործնական նշանակություն ունեին Եկեղեցու համար: Դրանք աստվածաբանական մտքի զանազան ուղղությունների և փիլիսոփայական դպրոցների, ավանդությունների ուղղության կոնվն էր:

Ալեքսանդրիայում աստվածաբանական դպրոցների միջև գոյություն ունեցող այս հակաճառությունները նպաստավոր հող ստեղծեցին հերետիկոսությունների ըստեղծման և աշխուժացման համար: Պատմական փաստ է, որ Դ դարի մեծագույն և վտանգավոր հերետիկոսական մոլորությունը՝ արիոսականությունը, ծնունդ է առել Ալեքսանդրիայում:

Այս իսկ պատճառով Ալեքսանդրիայի ուղղափառ հայրապետները Դ—Ե դարերում բուռն պայքար էին մղում վարդապետական այդ մոլորությունների դեմ: Այդ հայրապետների համար ճշմարտությունը միայն Եկեղեցու մեջ էր: Ճշմարտության միակ և ճշմարիտ աղբյուրը Աստվածաշունչն էր, որպես աստվածային Հայտնություն, որը վստահվել է Եկեղեցուն և նրա եպիսկոպոսական դասուն: Եկեղեցին ունի միաժամանակ առաքյալներից և նրանց հաջորդ ուղղափառ եպիսկոպոսներից ըստացած դավանական, հովվական թղթեր, ավանդություն և հրահանգներ, որոնց ամբողջական, անաղարտ պահպանումը սրբազան պարտականությունն է Եկեղեցու և ուղղափառ եպիսկոպոսների: Պետք չէ դավաճանել Աստվածաշնչի միջոցով Եկեղեցուն շնորհված աստվածային Հայտնությանը: Պետք է անփոփոխ պահել «Հաւատոյ կանոն»-ը և այդ հիման վրա միայն կառուցել ուղղափառության և քրիստոնեական մտածողության ամբողջ սիստեմը:

Դ—Ե դարերում Ալեքսանդրիայի Աթոռի հայրապետները հաստատորեն կանգնել էին Աստվածաշնչի, առաքելական և եկեղեցական հավատի ու ավանդությունների վրա:

Այս հարցում շատ կարևոր և վճռական դեր կատարեցին նաև Պետրոս (300—312), Ալեքսանդր (312—328) և Թեոփիլոս

⁶ Պրոֆ. Ն. Սագարդա, նույնը, էջ 3—4:

⁷ Նույնը, էջ 33:

(385—413) հայրապետները, իրենց եկեղեցական-առաքելական գործունեությամբ և իրենց արժեքավոր մատենագրական վաստակով, ի պաշտպանություն «Հառադույ դատանութեան» և ուղղափառության:

Պետրոս Ալեքսանդրացի Հայրապետ

Պետրոս Ալեքսանդրացու կյանքի և գործունեության մասին շատ քան ծանոթ չէ: Նա եղել է Ալեքսանդրիայի նշանավոր աստվածաբանական դպրոցի ղեկավարը, մինչև իր պատրիարք ընտրվելը:

Նա 300—301 թվականներին Գիովղենիական կայսրի (284—305) պետական դաժան հալածանքների ժամանակ շատ ծանր ու հոգեմաշ պայմաններում, կոչումի բարձր գիտակցությամբ և քրիստոնեական համարձակությամբ ղեկավարում է Ալեքսանդրիայի Աթոռը, որպես «եկեղեցվո պատվական և գիտուն առաջնորդ մը, ... անձնուրաց Հովիվ մը» (Թորգոմ արքեպ. Գուշակյան, Սուրբ և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 38: Ընդորք արքեպ. Գալստյան, Համաքրիստոնեական սրբեր, Իսթանպուլ, 1978, էջ 47):

Եվսեբիոս Կեսարացին վկայում է, որ՝ Պետրոս Ալեքսանդրացին 12 տարիներ ղեկավարեց Ալեքսանդրիայի Աթոռը մեծ արդյունավորությամբ, դաժան հալածանքների ժամանակ, մեծ ջանք ի գործ դրեց եկեղեցիների պայծառության և քարոզության համար, և իր կյանքը կնքեց մարտիրոսական մահով 312 թվականին:

Մեր եկեղեցին Պետրոս Ալեքսանդրացու հիշատակը կատարում է հունվարի 16-ին (Օրացույց Ս. Էջմիածնի, 1982, էջ 18. կաթոլիկ եկեղեցին նոյեմբերի 26-ին, իսկ հուլյները՝ նոյեմբերի 24-ին):

Պետական երկարատև և ծանր հալածանքների պատճառով հավատացյալներից ոմանք ուրացել էին իրենց հավատքը: Հարց էր ծագել ապաշխարությամբ ուրացողներին մորից եկեղեցու գիրկը ընդունելու խնդիրը: Այս ուղղությամբ «շատ խառն էր դարձել դրությունը մահ Ալեքսանդրիայում: Այստեղ Պետրոս Ալեքսանդրացին 306 թվականի իր շրջաբերական թղթով մեղմ սկզբունքներ էր հայտարարել ուրացողների (անկապների) համար և խոսեմություն էր համարել նրանց իսկույն ևեթ ընդունել համայնքի մեջ, խորհուրդ տալով

առհասարակ խույս տալ վտանգներից և չդիմել նահատակության»:

Պետրոս Ալեքսանդրացու այս խոսեմ և մարդասիրական վերաբերմունքի դեմ է դուրս գալիս Ալեքսանդրիայում Լյուկուպոսի Մելիտիոս եպիսկոպոսը, «նպատակ ունենալով գլխավորապես Ալեքսանդրիայի Աթոռի իշխանության դեմ մարտել»: Պետրոս Ալեքսանդրացու քաջակալությամբ «մեծ հուզում էր տիրում այս պատճառով Ալեքսանդրիայում»⁹:

305—306 թվականներին ժողով է գումարվում Ալեքսանդրիայում և Պետրոս Ալեքսանդրացին պաշտոնապես է հռչակում Մելիտիոսին, «հազում ոճիրների և կոտորելին զոհ մատուցանելու» ծանր մեղադրանքով: Մելիտիոսը սակայն տեղի չի տալիս: Ալեքսանդրիայի եկեղեցու ժողով այս ձևով ստեղծվում է Մելիտյան հերձվածք: Մելիտիոսը ինքն իրեն ներկայացնում է որպես ախույանը «մարտիրոսաց եկեղեցու»¹⁰:

325 թվականին, ի վերջո, Նիկիայի ժողովում Մելիտյան աղանդավորությունը նույնպես, արիսականության հետ դատապարտվում է և վերահաստատվում Ալեքսանդրիայի եկեղեցու ժողով, պատրիարքական օրինավոր իշխանությունը և եկեղեցական միությունը:

Արիոսը նույնպես Մելիտյան շարժման համակիր էր: Նրա կողմնակիցներից և գաղափարակիցներից շատերը ամիսամյա նույն այդ հերձվածին:

Պետրոս Ալեքսանդրացու մատենագրական վաստակը

Եվսեբիոս Կեսարացին, թեև չենք համակրանքով՝ է խոսում 'Պետրոս Ալեքսանդրացու եկեղեցական գործունեության մասին, քայց ոչինչ չի ասում նրա մատենագրական վաստակի մասին: Ըստ մատենագիրների վկայության Եվսեբիոսի լուրջան հիմնական պատճառը այն է, որ Պետրոս Ալեքսանդրացին հակա-ժողովունեյան էր, իսկ Եվսեբիոսը՝ աշակերտ և պաշտպան Ալեքսանդրիայի մեծ վարդապետին ու մատենագիրին¹¹:

Պետրոս Ալեքսանդրացին թողել է ոչ

⁹ Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 237—238:

¹⁰ Նույնը, էջ 238:

¹¹ Johannes Quasten, Patrology, vol. II, էջ 113:

¹² Որիզինեսի կենսագրության և մատենագրական վաստակի մասին տես «Էջմիածին», 1981, փետրվար, էջ 26—34, մարտ, էջ 17—21:

⁸ Եվսեբիոս Կեսարացի, նույնը, Պատմություն եկեղեցու, դպրություն երկրորդ, էջ 71—140:

մեծ մատենագրական վաստակ: Դժբախտաբար շատ փոքր հատակտորներ հասել են մեզ նրա նամակներից և աստվածաբանական տրակտատներից, ինչպիսիք են «Յաղագս Աստուածութեան», նվիրված Քրիստոսի Աստված լինելու վարդապետությանը, «Յաղագս Ծննդեան Տեսուն մերոյ», «Յաղագս Հոգւոյն», «Յաղագս Յարութեան», «Յաղագս Ապաշխարութեան», «Յաղագս Զատկի», «Նամակ առ Ալեքսանդրացիս ընդդէմ Մելիտիոսի»¹³:

Պետրոս Ալեքսանդրացի Հայրապետ, «որ նահատակվել է 312-ին, ընդարձակ գրական աշխատություններ չի թողել և եղածներից միայն հատակտորներ են մնացել, հունարեն, լատիներեն և ասորերեն լեզուներով, և կամ ուրիշ եկեղեցական հարց գրվածների մեջ»¹⁴:

Վերոհիշյալ ժողովածուում կա հայերեն թարգմանությամբ հետևյալ հատվածը. Պետրոսի եպիսկոպոսի Աղեքսանդրի. «Վասն որոյ եղեալն, ասէ, սուրբ կոչեացի և Որդի Աստուծոյ, իբր զի ծնեալն ի մարմնոյ մարմինն է: Քանզի Մարիամ ի մարմնի զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ծնաւ՝ զմի և զնոյն գոյով, այլ ո՛չ այլ և այլ, քաւ լիցի: Քանզի ճշմարտապէս ասեմք եթէ՝ Տէր Յիսուս, հաւատալով առաւել, եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ, և եթէ Յիսուս է Քրիստոսն, որպէս ինքն յետ Յարութեանն և ի Համբառնայն ինքն Յիսուս երևեցաւ»¹⁵:

Պետրոս Ալեքսանդրացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանության երկու փոքրիկ հատվածներ կան նաև Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» մեջ. «Սրբոյն Պետրոսի՝ Աղեքսանդրացոյ եպիսկոպոսի և մարտիրոսի, յորմէ յաղագս աստուածութեանն ասացեալ. «Վասն որոյ և որ ծնանելոցն է, ասէ, սուրբ է, կոչեացի Որդի Աստուծոյ»: Եւ այլ ևս նորին. «Զայստսիկ և զմեմանս այսոցիկ ամենայն ուրեք գրոց վերագրելով ցուցանեն, եթէ եղև Բանն մարմին, և երևեցաւ մարդկան Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, որպէս և ամենայն մարդիկ, ըստ նմանութեան եղեալ էր Բանն մարմին...»¹⁶:

¹³ Պետրոս Ալեքսանդրացու մատենագրական վաստակի մասին տես Quasten, նույնը, էջ 114—118:

¹⁴ Կնիք հաւատոյ..., հրատարակություն Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), Ս. Էջմիածին, 1914, էջ XXXVIII:

¹⁵ Նույնը, էջ 103—104:

¹⁶ Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառություն... Կարապետ Տ. վարդապետի և Երվանդ վարդապետի, Ս. Էջմիածին, 1908, էջ 2—3: Տես նաև «Արարատ» 1897, էջ 255—257:

«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» (դար Դ—ԺԳ) հրատարակության մեջ¹⁷ նշվում են նաև «Պետրոս հայրապետ Ալեքսանդրացոց առ Ակակ պաշտօնակից իմ և ընկերակից, և Հայրապետ եպիսկոպոսաց որ են ի Կ. Պոլիս» միջև փոխանակված Պետրոս Ալեքսանդրացու 9 և Ակակի 6 «Թղթակցությունը»:

Այս առթիվ գրված ծանոթագրության մեջ նշվում է, որ «մեր հիշատակած թղթոց հունական սկզբնագիրք կորսված են և միայն հայկական թարգմանությունը մնացած... թարգմանության ժամանակն հավանականաբար յոթերորդ դարուն կապտկանի»¹⁸:

Այդ ձեռագրերում կա նաև «վարք և վկայաբանություն Պետրոսի եպիսկոպոսի»: Տես ցուցակ մատենադարանի, I հատոր, ձեռագիր համար 2784:

Պետրոս Ալեքսանդրացու և Կ. Պոլսի Ակակ պատրիարքի միջև կատարված վերոհիշյալ «թղթակցություն»-ը Ե դարու վերջին քառորդին նույնամուն երկու հայրապետների միջև կատարված նամակագրություն է¹⁹:

Ալեքսանդր Հայրապետ Ալեքսանդրացի (312—328)

Ալեքսանդր Ալեքսանդրացին 312—328 թվականներին եղել է Ալեքսանդրիայի Աթոռի Հայրապետը:

Նա իր կրթությունը ստացել է Անտիոքի աստվածաբանական դպրոցի հիմնադիր ճանապարհորդ Լուկիանոս Անտիոքացու մոտ, որը ըստ Եվսեբիոս Կեսարացու վկայության համարվում է «իր ժամանակի ամենապատվական մարդը, բոլոր հանգամանքների մեջ, իր կյանքի ժուժկալությամբ և գրոց գիտության իր խորը հմտությամբ»²⁰, «Ամենագիտուն մարդը Արևելքում, պատկանելի անձնավորություն և իբրև ճգնավորական հալացքների տեր ավելի ևս սիրված իր աշակերտներից»²¹:

Լուկիանոսը նահատակվեց 312 թվականին, հունվարին: Նա համարվում է միա-

¹⁷ Վենետիկ, 1889, էջ 289—291:

¹⁸ Նույնը, էջ 289:

¹⁹ Գիրք թղթոց..., Թիֆլիս, 1901, էջ 248—278, Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ազգապատում, Ա հատոր, 1959, Բեյրութ, էջ 495—496, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, 1965, Թղթակցություն ընդ Ակակ, էջ 159, ձեռագիր համար 3076, 3078, 3305, 3306:

²⁰ Եվսեբիոս Կեսարացի, նույնը, դպրություն III, էջ 145—232:

²¹ Երվանդ վարդապետ, նույնը, էջ 245: Տես նաև Quasten, նույնը, էջ 142:

ժամանակ հայրը արիտասկանության և ուսուցիչը՝ Արիտսի (250—336):

Ալեքսանդր Ալեքսանդրացի հայրապետի օրոք Ալեքսանդրիայում շարունակվում է Մելիտյան ճերմվածք և գլուխ է բարձրացնում մեծագույն և ամենավտանգավոր ճերմակությունը ընդհանրական Եկեղեցու պատմության մեջ: Դա արիտասկանությունն էր²²:

Ալեքսանդր Ալեքսանդրացին ձեռնհասորեն և աշխրջությամբ պայքարում է երկու աղանդավորական այդ գաղափարախոսությունների դեմ և դատապարտում դրանք, պաշտպանում ուղղափառ հավատը և՛ իր առաքելական-եկեղեցական քարոզությամբ, և՛ իր մատենագրական փաստակով:

Ալեքսանդր Հայրապետը նախապես հայրաքար, ազնվությամբ և մեղմությամբ է վարվում Արիտսի հետ և աշխատում է նրան ետք կանգնեցնել իր վտանգավոր ճանապարհից, շեշտելով որ նրա նոր ուսմունքը և տեսակետները հակառակ են ավանդության և եկեղեցական հայրերի դավանության:

Արիտսը և նրա հետևորդները, սակայն, չեն ուզում լսել մեծ Հայրապետի զգաստացնող և զգուշացուցիչ ձայնը, և շարունակում են իրենց մոլոր վարդապետության քարոզությունը:

Ալեքսանդր Հայրապետը վճռական քայլերի է դիմում: Նա Ալեքսանդրիայում հրավիրում է 318 թվականին եգիպտացի և լիբիացի 100 եպիսկոպոսների մի ժողով, ընկնելու համար Արիտսի մոլորությունը: Ժողովը միաձայն դատապարտում է Արիտսին, նրա ուսմունքը և հետևորդներին:

Դժբախտաբար, սակայն, ուղղափառ եպիսկոպոսների վերոնիշյալ ժողովի որոշումները անազդեցիկ են մնում, առաջք առնելու համար արիտասկան շարժման:

325 թվականին հրավիրվում է Կ. Պոլսի Նիկիա արվարձանում առաջին տիեզերական ժողովը, ընդհանրական Եկեղեցու 318 հայրապետների մասնակցությամբ, որոնք դատապարտում են և՛ Արիտսին, և՛ Մելիտիոսի մոլորությունները և քանաձևում ծանոթ «Հաւատոյ հանգանակ»-ը կամ «Հաւատամք»-ը որպես ուղղափառ դավանության մասնիֆեստը:

Ալեքսանդր Հայրապետը վախճանվում

է 328 թվականին, և Եկեղեցու պատմության մեջ հիշվում է որպես Նիկիայի ժողովի ուղղափառ ու տիրական դեմքերից մեկը, իր աշակերտ և հաջորդ Աթանաս տարկավագի հետ (295—373), որը «եղև իսկ ախոյան ընդդէմ Արիտսի շարափառութեան և ամբարշտութեան... և յաղագս գիտութեան և սուրբ վարուցն փաղեաց որպէս արեգակն ի մէջ մեծի Սիւննողոսին և մեծաբեցաւ և փառաւորեցաւ յամենեցուն»²³:

328 թվականին Ալեքսանդր Հայրապետին Ալեքսանդրիայի Աթոռի վրա հաջորդում է Սուրբ Աթանաս Կոնստանդինու կաթոլի համաձայնությամբ և եպիսկոպոսների ժողովի որոշումով. «Լուսուցանել զնա լԱթոռ Սուրբ Անտարանչին Մարկոսի»:

Ալեքսանդր Հայրապետի մատենագրական փաստակը և դրա հայերեն քարզմանությունները

Գ—Ե դարերում եկեղեցական հայերի մատենագրական փաստակում կարևոր տեղ են զբաղում թղթերը, կամ եկեղեցական թղթակցությունները, իրենց և՛ աստվածաբանական և՛ կրոնական, ինչպես նաև պատմական, ընկերային, նույնիսկ քաղաքական, տնտեսական և պրոֆեսիոնալ կարևոր և բացառիկ րովանդակություններով:

Եկեղեցական այդ թղթակցություններում ընթերցողի աչքի առաջ է ողջ դարը իր հուզումներով, իր պայքարներով, վեճերով, իր դժվարություններով և հեղինակների անձնական վկայություններով և մակնաբանություններով:

Սուրբ հայրերի թղթերը հանդիսանում են միաժամանակ քրիստոնեական նամակագրական արվեստի մարգարիտները, անգերազանցելի իրենց ոճով, լեզվով, ըզզացմունքների խորությամբ, շեղմությամբ և քրիստոնեական հումանիզմով, ինչպիսիք են թղթերը մանավանդ Ս. Աթանասի, Ս. Բարսեղ կեսարացու, Ս. Գրիգոր Նյուսացու, Ս. Գրիգոր Նազիազանացու, Ս. Լուկանենու Ոսկերեքանի, Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու և ուրիշների:

Նամակագրական հարուստ փաստակ է թողել նաև Ալեքսանդր Ալեքսանդրացին, Արիտսի և նրա ուսման մասին գրած իր թղթերում: Այդ նամակները հասցեագրված են Արմենյի և Արևմտոսի բոլոր եպիսկոպոսներին, և տալիս են ճշգրիտ րովանդա-

²² Արիտասկանության մասին կարգող հետևյալ աշխատությունները. Երվանդ վարդապետ, նույնը, էջ 244—254: Quasten, patrology, vol. III, էջ 7—13: «Հեթանոսի» ամսագիր, 1977, փետրվար, էջ 23—27:

²³ Ս. Աթանաս Ալեքսանդրիոյ Հայրապետի հուշ. բողոք և ընդդիմադրությունը, Վենետիկ, 1599, էջ 1—23:

կույությունն ու վտանգավորությունը արիտասականության:

«Նիկիայի ժողովի ժամանակներում մոր Ալեքսանդրիայի դպրոցում հանդես է գալիս Ալեքսանդր Ալեքսանդրացի եպիսկոպոսը, արիտասական մոլորության առաջին եռանդուն մերկացնողը, որ միանգամից և պարզ կերպով որոշեց նրա էությունը և նրանից ծագող հետևանքները»²⁴:

Ալեքսանդր Հայրապետի մատենագրական վաստակի մեջ կարևոր են նաև նրա քարոզներն ու ճառերը:

Ալեքսանդր՝ Նիկիայի առաջին «տիեզերական ժողովի ժամանակակից և իր Աթանաս սարկավագի հետ... նույն ժողովում ամենակարևոր դերը կատարող Ալեքսանդրիայի եպիսկոպոսից երկու շրջաբերական թղթեր կան մնացած և մի քանի հատվածներ հունարեն, այլ և մի ճառ ու բազմաթիվ հատվածներ՝ ասորերեն: Իսկ հայերեն՝ երկու փոքր հատվածներ»²⁵:

«Երանելույն Աղեքսանդրու եպիսկոպոսին Աղեքսանդրու, ի հանդէս, որ ի Տնօրէնութիւնն»:

«Լոյսն մայր է, և Յովսէփ հայր, և ապականութիւն ո՛չ ուրեք, այս երեւելապէս էր, կատարեալն եղև մարմին՝ գոյով հանն, ո՛չ ըստ հնոյ ծննդեան ծնունդ, որով ապականութիւնն քաղաքավարիւր, և ծնաւ ո՛չ յաղտեղիս, այլ յԵւայի գործարանն»:

Նորին

«Ոչ կարէ մահ բնակել ընդ կեանս, և ոչ ապականութիւն ընդ անապականութեան. քանզի ասէ, որ ետես զիս՝ ետես զՀայրն իմ»²⁶:

Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» հայերեն թարգմանության մեջ կա ութ տող հետևյալ վերնագրի ներքո. «Երանելոյ Ալեքսանդրի՝ եպիսկոպոսապետի Աղեքսանդրի, «իսկ զի՛նչ արդեք հարկաւոր էր գալըն զԱստուած յերկիր և մարմնաճալ ի կուսէն և խանձարուրապատիլ և ի մտոր դճանի և կաթնաբոյծ լինիլ ի գոգս և մկրտիլ ի Յորդանան... և անարգիլ ի ժողովրդէնէն, և կախիլ զփայտ, և թաղիլ յերկիր և յառնել ի մեռելոց եօթեան տունեալ փրկանս անձին ընդ անձին, և մարմին փոխանակ մարմնոյ, և արիւն փոխանակ արեան, զի զոր պարտ էր մարդն մահ, զայս Քրիստոս փրկանաւորեաց մեռանելով»²⁷:

Թեոփիլոս Հայրապետ Ալեքսանդրացի (385—412)

Թեոփիլոս Ալեքսանդրացին հանդիսանում է Ալեքսանդրիայի Աթոռի վաստակաշատ աթոռակալներից մեկը, թե՛ իր եկեղեցական-առաքելական խորթոթանությամբ և թե՛ մատենագրական իր հարուստ վաստակով:

Թեոփիլոսը Ալեքսանդրիայի Աթոռի վրա երրորդ հաջորդ պատրիարքն էր Ս. Աթանասի և նախորդ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու: Նա 28 տարի ղեկավարում է Ալեքսանդրիայի պատմական Աթոռը 385—412 թվականներին, խորապես գիտակից այդ Աթոռի նշանակությանը, Աթոռ, որը շատ նշանակալից դեր է կատարել տվյալ շրջանում թե՛ եկեղեցու և թե՛ կայսրության պատմության մեջ:

Նրա կենսագիրները վկայում են, որ «նա հավիտենական թշնամի էր խաղաղության և առաքինության, հանդուգն էր և վատ մի մարդ, որի ձեռքերը կեղտոտվել են ոսկով և արյունով»²⁸:

Սույն վկայությունը կարող է «չափազանցություն լինել, քայց Թեոփիլոսը որպես կերպարը մի եպիսկոպոսի, վայրագ էր և ծայրահեղորեն անխիղճ: Այնուամենայնիվ նա մտավոր բացառիկ կարողության տեր մեկն էր, որը իր ակնբախ ձիրքերով հսկայական ազդեցություն է թողել իր ժամանակի թե՛ եկեղեցական և թե՛ քաղաքական-պետական գործերի վրա բարձրացնելու համար իր Աթոռի հեղինակությունը և ազդեցությունը»²⁹:

Կատական Եկեղեցին Թեոփիլոսի տոմը որպես սրբի կատարում է հոկտեմբերի 15-ին, իսկ ասորի Եկեղեցին՝ հոկտեմբերի 17-ին:

Թեոփիլոսի անունը սերտորեն կապված է եղել իր ժամանակի երեք կարևոր իրադարձությունների հետ:

Եգիպտոսում վերջին ու վճռական հարվածը նա՛ է տվել հեթանոսության: Այս մասին ակամատես Խորենացին վկայում է. «Կործանվել և կործանվում էր եգիպտական, բյուզանդական հեթանոսական մշակույթը, որի տեղ էր բռնել քրիստոնեական եկեղեցական աստվածաբանությունը... Մարկոսը ավետարանական քարոզությանը... չկան վիշապի ցեղից դյուցազունների գերեզմանները, այլ վայելչանում են սրբերի վկայարանները... Տուրի ամսի

²⁴ Պրոֆ. Ն. Սագարդա, նույնը, էջ 31:

²⁵ Կնիք հաւատոյ, նույնը, էջ XXXIX:

²⁶ Նույնը, էջ 247:

²⁷ Հակաճառութիւն, նույնը, էջ 8:

²⁸ Է. Կիպլոն, Հռոմեական կայսրության անկումն ու կործանումը...

²⁹ Quasten, patrology, vol. II, էջ 100:

տառն և մեկին Աստվածահայտնության տունն է կատարվում... զոգում են հաղթող մահատակներին... այլև չեն զոհվում Աստվածի շար դեմ, այլ Քրիստոսի արյան պատարագ են մատուցում»²⁰:

Ալեքսանդրիայի մշակութային, կրոնական քրիստոնեական կյանքում «տեղի ունեցած արմատական սույն փոփոխությունների մեջ» (Խորենացի) վճռական է եղել Թեոփիլոս Ալեքսանդրացու դերը:

Թեոփիլոսը 391 թվականին Թեոդոս Ա կայսրի համաձայնությամբ և քաջալերանքով բռնեց հարձակման է անցնում Եգիպտոսում վերացնելու համար հեթանոսական պաշտամունքների մնացուկները, կրթամոլ տաճարները և պատրիարքական մայրաքաղաքը զարդարում բազմաթիվ և կեղեցիկներով, մատուռներով և քրիստոնեական այլ հուշարձաններով²¹:

Թեոփիլոսի երկրորդ զործը լինում է բռնեց պայքար մղել Ռիգենեսի դեմ²²:

Սույն պայքարը միաժամանակ սերտորեն առնվում է Ա. Հովհանն Ոսկեբերանի դեմ Թեոփիլոսի դատապարտելի պայքարի հետ, որի հետևանքով մեծ Հայրապետը աթոռազրկվում է Կ. Պոլսի պատրիարքական իր Աթոռից, արքայվում, որ և մահանում է: Հովհանն Ոսկեբերանի դեմ Թեոփիլոսի սույն թշնամական ու վիրավորական պայքարը ոչ մի գաղափարական հիմք չի ունեցել²³:

Թեոփիլոսը իր Զատկական նամակներում արտահայտվել է ի նպատակ Աստծու մարմնի «ամենլուծականության»²⁴:

Եգիպտոսի Նիտրիան անապատի վանականները, որոնք Ռիգենեսի ուսման հետևորդներ էին, այս առթիվ լուրջ կասկածներ են ունեցել Թեոփիլոսի ուղղափառության մասին և նրա մոտ ուղարկել են մի հանձնաժողով, Թեոփիլոսի ուղղափառությունը քննելու համար:

Թեոփիլոսը խորապես վիրավորվում է, և 401 թվականին Ալեքսանդրիայում մի ժողով է գումարում, դատապարտում է Ռիգենեսի վարդապետությունն ու նրա հետևորդների դեմ սկսում է մի բռնեց հալածանք:

²⁰ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 344: Տես նաև Մ. Մկրտչ, Մովսես Խորենացի, Երևան, 1970, էջ 8—9:

²¹ Quasten, նույնը, էջ 100:

²² Ռիգենեսի մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1981, № 9, էջ 26—34, № 9, էջ 17—21:

²³ Տես այս մասին «Էջմիածին» ամսագիր, 1977, դեկտեմբեր, էջ 39—46:

²⁴ Quasten, նույնը, էջ 100:

Եգիպտոսի Նիտրիան անապատի պաշտամունքները դիմում են Հովհանն Ոսկեբերանի հովանավորության և պաշտպանության: Այս նախադասությունը առիթ է հանդիսանում Թեոփիլոսին, թշնամաձայն նաև մեծ Սրբի հետ, որին ինքը եպիսկոպոս էր նույնադրել 398 թվականին Կ. Պոլսի պատրիարքական Աթոռի համար:

Այս բոլորի տխուր հետևանքը այն է լինում, որ Կ. Պոլսում Ոսկեբերանի դեմ կազմվում է թշնամի և հակառակորդ ուժերի զորեղ մի խմբակ, որը դիմում է բոլոր ստորին միջոցների՝ նրան անվանարկելու և տապալելու համար:

Թեոփիլոսը «շատաքաջուն միա» ընդ նմա (Ոսկեբերանի դեմ), վասն բազմափայլ շնորհաց Հոգույն, որ բնակեալ էր ի նմա»²⁵:

Մեծ Սրբի դեմ «վրեժխնդրութեամբ» էր լցված նաև «չար և անզգամ» Եգիպտոսի կայսրուհին, որին իր մեկ քարոզում Ոսկե-Հերովդիադալ մոլեգնեալ յանդգնի, դարձեալ կաքաւէ, դարձեալ միտանգամ խնդրէ զըզլուխն Յովհաննու ի Հերովդէ անօրէնութեամբ կարելս:

Թեոփիլոս պատրիարքի նախանձն ու անսիրելությունը Ոսկեբերանի դեմ առելության է փոխվում, երբ նա 402 թվականին հասնում է Կ. Պոլիս 36 եգիպտացի և իրեն համակիր եպիսկոպոսների հետ, և կայսրուհու և այլ մուր ու խառնակիչ ուժերի հետ դաշնակցած, որոնցից ոմանք «ի փառամոլութենէ գոլորշեալք», ուրիշներ՝ «ի նախանձու ամպագունեալք, յարուցանելին լեկեղեցուցն Քրիստոսի գիտմունս երկապառակութեան, զմրիկս խոտմութեան, զպեկոծութիւն հակառութեան և զնաարկութիւնս գայթակղութեան»²⁶:

403 թվականին Թեոփիլոսի նախագահությամբ գումարվում է Քաղկեդոնի մոտ «Կաղենաց ժողովը», որտեղ Ոսկեբերանը աթոռազրկվում է և արքայվում, Թեոփիլոսի մեքենայություններով, կայսրուհու վրեժխնդրությամբ. «դատապարտեցաւ արդարն և անկաւ յԱթոռոյ, և ամբոյնեալ իրրեզծով խոտկեցաւ առ հասարակ թագաւորական քաղաքն, զի ամենեցուն սիրելի էր Սուրբն»²⁷:

²⁵ Պատմություն վարդգ (սրբանշնան և դիպտածոց սրբոց) Յովհանն Ոսկեբերանի, Վենետիկ, 1752, էջ 95:

²⁶ Նույնը, էջ VII:

²⁷ Նույնը, էջ 97: Ս. Հովհանն Ոսկեբերանի դեմ Թեոփիլոս պատրիարքի հակառակության այլ շարժառիթների մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1977, դեկտեմբեր, էջ 42—46:

Թեոփիլոս պատրիարքի մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունները

Թեոփիլոս Ալեքսանդրացին այնուամենայնիվ համարվում է Ե դարի առաջին տասնամյակի Ալեքսանդրիայի Աթոռի մեծանուն և տիրական պատրիարքներից մեկը, նաև իր մատենագրական հարուստ վաստակով:

Դժբախտաբար, սակայն, նրա մատենագրական վաստակից շատ քիչ բան է հասել մեզ:

Թեոփիլոսի մատենագրական վաստակի կարևորագույն աշխատությունները եղել են նրա Զատկական կանոնը, տոմարական մի աղյուսակ, որը նա կազմել է Զատիկը տոնելու համար 389—479 թվականներին: Թեոփիլոսը իր սույն աշխատության մեջ առաջարկում էր Թեոփոս կայսրին պետականորեն ընդունել Ալեքսանդրիայի Աթոռի Զատիկը տոնելու ավանդությունը, որպես ընդհանրական կանոն, բոլոր եկեղեցիների համար:

Թեոփիլոսը թողել է նաև մամականագրական հարուստ ժառանգություն, մանավանդ Զատկական մամակների շարքը, որը կարևոր է որպես աղբյուր իր ժամանակի եկեղեցական պատմության համար:

Թեոփիլոսի «Ընդդեմ Որիգենեսի» ճառը և նրա մի քանի քարոզները նույնպես ունեն մատչելիության համար:

Թեոփիլոսի մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների մասին առաջինը խոսվում է «Մատենադարան հայկական թարգմանություններից աշխատության մեջ»:

Սույն ժողովածուում հիշվում են երկու Թեոփիլոսներ. առաջինը՝ «Թեոփիլոս պատրիարք Ալեքսանդրիայի» և երկրորդը՝ «Թեոփիլոս աշակերտ Ոսկեբերանի»:

Ժողովածուում հիշվում են նաև երկու Թեոփիլոսների ճառերի հայերեն թարգմանու-

թյունները, որոնց «հունական սկզբնագրաց չի կրցանք հանդիպիլ» (էջ 474): «Հայ թարգմանության ժամանակն ալ՝ ըստ հավանական կարծյաց հիմնվածորդին կվերաբերի» (էջ 474):

Դժվար է այժմ երկու Թեոփիլոսների անունով մեզ հասած ճառերի հայերեն թարգմանության մասին վճռական խոսք ասել: Ամհրաժեշտ են այդ ուղղությամբ մոտ ուսումնասիրություններ:

Տիմոթեոս Կուզի ծանոթ «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Բաղլէդոնի» աշխատության մեջ կան 8 հատակտոր թարգմանություններ Թեոփիլոսի գրվածքներից:

Էջ 105—106. «Երանելոյ Թեոփիլոս պիսկոպոսի Աղեքսանդրեայ՝ ի հանձն առ ձայնականէ» և Նորին՝ «ի քսաներորդէ առաջնորդէ տաւնականէն»:

Էջ 105—106. «Երանելոյն Թեոփիլոս պիսկոպոսապետի Աղեքսանդրեայ՝ ի հիմնվածորդ տաւնականէն» և Նորին՝ «ի վեցերորդ տաւնականէն»:

Էջ 160—161. «Երանելոյ Թեոփիլոս պիսկոպոսապետի Աղեքսանդրեայ և Հօր մերոյ՝ ԻԱ, տաւնական թղթոյն» և Նորին՝ «ի Ի. երորդէ Բ. որդէ տաւնական թղթոյն», Նորին՝ «ի Գ, ի տաւնական թղթոցս»:

Էջ 194—195. «Երանելոյ Թեոփիլոս պիսկոպոսապետի Աղեքսանդրեայ ի (վե)ցերորդ տաւնականէն», Նորին՝ «ի քսաներորդէ Ա. երորդէ տաւնականէն»:

Նորին՝ «ի քսաներորդ երրորդ տաւնականէն»:

Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի ցուցակում հիշվում է Թեոփիլոսի «Յաղագս արտասուոց» և «Ի գերեզման աստուածընկալ» ճառերը⁴⁰:

Ձեռագրաց ցուցակի երկրորդ հատորում⁴¹ քսան տարբեր ձեռագրերում նշվում են Թեոփիլոս պատրիարքի ճառերի հայերեն թարգմանությունները:

³⁸ Թեոփիլոսի մատենագրական վաստակի մասին տես Quasten, նույնը, էջ 101—106:

³⁹ Վեներիկ, 1889, էջ 473—477:

⁴⁰ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, Երևան, 1965, էջ 1499:

⁴¹ Նույնը, հատոր Բ, Երևան, 1970, էջ 1820:



ձեռագրերում: Ուստի հայերեն թարգմանության հանգամանքների և առանձնահատկությունների պարզաբանումը մեր բանասիրության կարևոր խնդիրներից է հանդիսանում:

Հայագիտության մեջ արմատացած է այն տեսակետը, որ Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն բնագիրը պատկանում է հայ թարգմանական գրականության առաջին շրջանի՝ Մ. Թարգմանությունների թվին¹⁰, որի անառարկելի վկայությունն է նրա դասական լեզուն: Ինչ վերաբերում է թարգմանության նախօրինակի հարցին, ապա նրա մասին հայտնվել են տարբեր կարծիքներ: Նորայր Բյուզանդացին, Ն. Անդրիկյանը Թ. Թոռնյանը և Եղիշե արքեպ. Դուրյանը «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն բնագիրը, առանց որևէ բացատրության, դասել են ասորերենից կատարված ոսկեդարյան թարգմանությունների շարքը¹¹: Համեմատաբար վերջերս Կյուրեղի խնդրո առարկա աշխատության նորահայտ պատմիկների ուսումնասիրության առիթով սույն կարծիքի հիմնավորման մի փորձ է կատարել Ս. Քոլանջյանը, հաշվի առնելով Հ. Տաշյանի այն դիտողությունը, որ «հայը շատ կը շեղի լուսարեւեն»¹², և ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ հայերեն բնագրում մի շարք աստվածաշնչական անուններ, ինչպես՝ Եղիշա կամ Եղիշե, Յմատոն և այլն, տառադարձված են ասորական ձևով¹³:

Մյուս տեսակետը, որի համաձայն Կյուրեղի «Կոչումն ընծայութեան» երկը հայերեն է թարգմանվել հունարենից, հստակորեն շարադրված է Հ. Ն. Ակինյանի գեր-

մաներեն մի նամակում՝ ուղղված հայագետ Ս. Լիոնեին. «Վաղուց ի վեր իմ հաստատ համոզումն է եղել, որ հիշատակված թարգմանությունը կատարվել է ուղղակի հունարենից: Հունարենի հետքերը նրանում այնքան ակնառու են, որ ինձ զարմանք է պատճառում, երբ հանգում եմ ասորական նախօրինակ ենթադրելուն: Որքան գիտեմ, առաջին անգամ Նորայր Բյուզանդացին է հայտնել այս կարծիքը, որին հետևել է Թոռնյանը: Ոչ ոք ապացույցներ չի բերել: Շշմարիտ է, որ հայ թարգմանիչը, որն իր գործը շարադրել է պերճաշուք լեզվով և դասական ոճով, տեղ-տեղ իրեն թույլ է տվել օգտագործել որոշ արտահայտություններ, որոնք ավելի հատուկ են սեմական լեզուներին¹⁴, թեև հայերենին նույնպես խորթ չեն: Դա, ի դեպ, ցույց է տալիս, որ թարգմանիչը հավանաբար ծանոթ է եղել ասորերենին: Դուք կարող եք վստահ լինել, որ «Կոչումն ընծայութեան» հայերեն թարգմանության նախօրինակը հունարեն բնագիր է եղել»¹⁵:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայերեն թարգմանության նախօրինակի հարցը դեռևս չի ստացել իր վերջնական լուծումը, քանի որ Հ. Ն. Ակինյանի տեսակետը նույնպես անհրաժեշտ չափով փաստարկված չէ: Այդ պատճառով հարկ ենք համարում ստորև հանգամանորեն անդրադառնալ տվյալ խնդրին:

Մանրամասն բնագրական համեմատությունը ցույց է տալիս, որ հայերեն թարգմանությունը հարազատորեն հետևում է հունարեն բնագրին, որպես կանոն չխախտելով նրա ընթացքը, չկատարելով որևէ էական հավելում կամ բացթողում, պահպանելով և հաճախ նույնիսկ պատճենելով նրա շարադասական ու բառակազմական առանձնահատկությունները:

Այսպես, հայ թարգմանիչը հունական բնագրի ժխտական նախածանց ունեցող բառերի դիմաց կանոնավոր կերպով դնում է նրանց հայերեն համարժեքները, օրինակ. անվարձ [388]¹⁶ = ἀμειψος [1017], ան-

¹⁰ Հմմտ. Հ. Գ. Զարբանյան, Մատենադարան..., էջ 524. Հ. Ն. Ակինյան, Դասական հայերենը և վիեճակյան Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 42 և այլն:

¹¹ Տե՛ս Նորայր Բյուզանդացի, Կորին վարդապետ և նորին թարգմանությունը, Տիֆլիս, 1900, էջ 30. Ն. Անդրիկյան, Գեղեցիկը լեզուին մեջ, «Բազմավեպ», 1907, էջ 512, 516. Թ. Թոռնյան, Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց երկրորդ, երրորդ և չորրորդ դասուց, հատ. Բ, Վիեննա, 1910, էջ 11: Եղիշե արքեպ. Դուրեան, Պատմություն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 24. Վ. Սվանսը թյուրիմացաբար այս տեսակետը պաշտպանողների շարքն է դասում նաև Հ. Ն. Ակինյանին. տե՛ս W. Swaans, À propos des «Catéchèses...», p. 29.

¹² Տե՛ս Հ. Յ. Տաշյան, Ցուցակ..., էջ 694:

¹³ Տե՛ս Ս. Քոլանջյան, Նորահայտ պատմիկներ..., էջ 208—204:

¹⁴ Հ. Ն. Ակինյանը նկատի ունի Թ. Թոռնյանի այն դիտողությունը, որ թարգմանության մեջ հանդիպում են «սեմական լեզուի քանի մը ասացուածք». տե՛ս Թ. Թոռնյան, Հատընտիր ընթերցուածք..., էջ 11:

¹⁵ Տե՛ս S. Lyonnet, Les origines de la version arménienne et le Diatessaron (Biblica et Orientalia, 13). Roma, 1950, p. 111.

¹⁶ Հայերեն բնագրի քաղվածքներին կցված փակագծերում նշվում են Կյուրեղ Երուսաղեմացու երկի վիեճակյան հրատարակության էջերը (տե՛ս ծանոթ.

պիտան [403] = *ἀντιπικτός* [1024], անշար-
ժական [403] = *ἀνίσχυτος* [1025], անմիտ
[413] = *ἀνυπνός* [1037], անմոլար [415] =
ἀνυπνός [1041] և այլն:

Հայերեն բնագրում համարյա միշտ գե-
րադրական աստիճանով են դրված այն
ածականները, որոնք հունարենում նույն-
պես օգտագործված են գերադրական աս-
տիճանով, ինչպես. պատրաստագույն [2] =
ἐκπαιστικός [372], չարագույն [11] = *κακός* [1036]
և այլն: Համախ նույն ձևով է
վերադրադրված նաև ածականների համե-
մատական աստիճանը, օրինակ. քաղցրա-
գույն [35] = *γλυκύς* [436], օգտակարա-
գույն [35] = *ωφέλιμος* [436], երկայնա-
գույն [148] = *μακρότερος* [644] և այլն:

Շատ ավելի հաճախակի են այն դեպ-
քերը, երբ հայերեն թարգմանության մեջ
գործածված բարդ բառերը իրենց քաղա-
դրիչներով միանգամայն համընկնում են
հունական բառարարություններին, այս-
պես. պտղաբեր [4] = *καρποφόρος* [375],
ծառայակից [6] = *δουλοῦχος* [377], որդե-
հայրություն [51] = *γονιμοποιία* [465], աստ-
ուածահար [109] = *θεοπληχτής* [580], եր-
կակնեղան [152] = *διεφθόρα* [649], որդե-
ծնություն [155] = *γενέσις* [653], հագիա-
խոս [210] = *μεγίστος* [737], կուսարար
[299] = *καρποποιός* [765] և այլն: Ի դեպ,
վերջին երկու բառերը հայ մատենագրու-
թյան մեջ ծանոթ չեն այլ աղբյուրներից:

Երբեմն, կարծես չբավարարվելով մեկ
բառապատկանով, թարգմանիչը տալիս է
միանգամից երկուսը, ինչպես. փշաբեր
տատասկաբեր [13] = *ἀκτινοφόρος* [389],
ոսկիապատ ոսկիակոտ [20] = *χρυσόκοιτος*
[397], համբաակոն ցնորակոն առ-
նել [312] = *φαντασιακότως* [884], դիա-
կապուտ գերեզմանակրկիտ [402] = *τυρβω-
δής* [1021], անասուն անբան [405] =
ἀλόγος [1028] և այլն: Հատկանշական
է, որ համբաակոն և ցնորակոն բառերի
համար նույնպես «Նոր Հայկազյան բառա-
րանը» վկայակոչում է միայն այս աղբյու-
րը¹⁷:

Նշված բնույթի բառային համապատաս-
խանություններն ինքնին վերցրած դեռևս
չեն կարող հայերեն և հունարեն բնագրերի

առնչակցության ապացույց համարվել, քա-
նի որ նույնպիսի բառարարություններ
հանդիպում են նաև ասորերենից թարգման-
ված բնագրերում¹⁸: Սակայն, երբ խոսքը վե-
րաբերում է հայերեն և հունարեն բնագրե-
րում այդպիսի բառերի կանոնավոր հան-
դիպակացության հարյուրավոր, եթե չա-
սենք՝ հազարավոր դեպքերի, ապա չի կա-
րելի դա բնագրերի կապն ապացուցող
կարևոր փաստ չդիտել:

Բարեբախտաբար «Կոչումն բնծալութեան»
երկի հայերեն թարգմանությունը պա-
րունակում է նաև հունական բնագրին հա-
մապատասխանող այնպիսի տարրեր, որոնք
արդեն ոչ մի կերպ հնարավոր չէ բացատ-
րել ասորերենի միջնորդությամբ: Իրան-
ցից են, օրինակ, ամանցավոր կամ քաղ
բառերից կազմված ածականների գերա-
դրական աստիճանի հետևյալ ձևերը. աճո-
րինագույն [22, 28] = *αδωροχρόνιος* [401,
424], անաստուածագույն [117] = *ἀθεοποιός*
[597], թեբահալառագույն [140] =
θεοκαταρτικός [632], անմտագույն [331] =
ἀνελπιστικός [912], մեծարաբբառագույն
[360] = *μεγαλοφρονέτης* [960]¹⁹: Եթե
հունարեն և հայերեն բնագրերի միջև ասո-
րական միջանկյալ օղակ լիներ, ապա ան-
հնար է, որ նշված բառակազմությունները
իրենց երեքական քաղադրիչներով (նա-
խածանց-բառարմատ-վերջածանց կամ բա-
ռարմատ-բառարմատ-վերջածանց) քաղա-
ծակապես համընկնեին իրար, քանի որ աս-
տիճանները նախ բավականին դժվարանում
է քաղ բառերի ստեղծման հարցում, երկ-
րորդ՝ չունի ածականի գերադրական աս-
տիճանի կազմության հատուկ ձև և դրա
համար դիմում է նկարագրական եղանա-
կի օգնությանը: Համեմատական աստիճա-
նի համար այն սովորաբար գործածում է
yatir men (ստանել քան), իսկ գերադրա-
կանի համար՝ *yatir men kul* (ստանել
քան զամենայն) արտահայտությունները,
որոնք ասորերենից կատարված հայերեն
թարգմանություններում որպես կանոն վեր-
արտադրվում են նույնությամբ:

Հունական նախօրինակի ազդեցության
ուշագրավ հետքերից է նաև Կյուրեղի երկի
հայերեն թարգմանության հետևյալ հատ-
վածը. «Գալիլեացի Էիմ Պետրոս և Ան-
դրեաս, և անդէն վաղմաղակի պարսկա-

5), իսկ հունարեն բաղվածքների կողքին՝ Ժ. — Պ.
Միսիի հրատարակության էջերը (տե՛ս ծանոթ. 1):

¹⁷ Գնորակոն բառի համար բառարանում նշված
է նաև Թովմա Արքունու Պատմությունը:

¹⁸ Հմմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Արամիւմ Խոստա-
փանոցի «Աղայր Արևելիցը», Երևան, 1976, էջ 86—
87:

¹⁹ Թերմատատագույն բառը բացակայում է «Նոր
Հայկազյան բառարանում», մեծարաբբառագույն բա-
ռի համար այնուպե նշված է միայն Կյուրեղ Արա-
ստեղծացու վկայակոչումը, իսկ անաստուածագույն
բառի համար՝ Կյուրեղի և Փիլոնի մեկական կիրա-
րություններ:

նային և պարթևանային» [376]: Պարսկա-
նալ և պարթևանալ բայերը, որոնք «Նոր
Հայկազյան բառարանի» տվյալներով
վկայված չեն այլ աղբյուրներում, պարզա-
պես պատճենված են հունարեն բնագրի
περσικῶ և μνησικῶ [988] բառերից: Մի
փոքր տարօրինակ կարող է թվալ այն
հանգամանքը, որ երկրորդ բայի Μνησικ
(մեղացի, մար) արմատի դիմաց հայերե-
նում դրված է պարթև: Ինչպես ստորև կը-
նետանք, թարգմանիչն այդպես է վարվում
նաև այդ բառի գործածության մյուս դեպ-
քերում, որ նշանակում է, թե V դ. Հայաս-
տանում մարերի և պարթևների նույնու-
թյան պատկերացում է գոյություն ունեցել:
Հայերեն և հունարեն բնագրերի կապի
պերմաստիքն ավայությունն է նաև այս նա-
խադասությունը. «Եւ գրէր առ պատկերի
անդ հոռովմայեցոց լեզուովն՝ Սիմոնի դէի
սանքթո, որ թարգմանեալ կոչի՝ Սիմովնի
սրբոյ աստուծոյ» [102] = ὁ πνευματικὸς τῆς
‘Ρωμαίων γλώττης, Σίμωνι Δεσ Σαρχτω, ὁ περ
ἐρμηνεύμενος ἐν ὁλίῳ, Σίμωνι Θεῷ ἀγίῳ [561]:
Դժվար է պատկերացնել, որ ասորական
բնագրի միջնորդությամբ հնարավոր էր
հայերենում ունենալ ընդգծված լատինե-
րեն բառերի համարյա բացարձակորեն
նշգրիտ տառադարձությունը:

Եվ վերջապես, Կյուրեղի երկի հայերեն
թարգմանության նախօրինակի հարցը քն-
նելիս չի կարելի հաշվի չառնել նաև հա-
յերեն բնագրում գործածված հունարեն
բառերի առկայությունը: Խոսքը վերաբե-
րում է ոչ թե հայոց լեզվի ճիմնական բա-
ռապաշարում տեղ գտած հունական փո-
խառություններին (եպիսկոպոս, եկեղեցի,
մարտիրոս, կաթողիկե և այլն), այլ այնպի-
սի բառերի, որոնք համեմատաբար հազվա-
դեպ են պատահում մատենագրական աղ-
բյուրներում: Նման բառերի գործածությունը
սովորաբար սահմանափակվում է թարգ-
մանական հուշարձանների շրջանակներում
և մեծ մասամբ ուղղակի պայմանավորված
է թարգմանության նախօրինակի թելա-
դրանքով: «Կոչումն ընծայութեան» երկի
հայերեն բնագիրը պարունակում է մի ամ-
բողջ շարք այդպիսի բառեր.

Անթեմ [321] = ἀνθεμῖς [897]. «Նոր
Հայկազյան բառարանն» անթեմ բառի հա-
մար նշում է միայն մեր աղբյուրի վկայու-
թյունը, որից և կախված են նրա գործա-
ծության հետագա դեպքերը:

Գրամատիկոս [377. 2 անգամ] = γραμμα-
τικὸς [988]. Նույն բառարանը, որտեղ
այս բառը նշված է գրամատիկոս ձևով,

V դ. մատենագրությունից բերում է ևս եր-
կու վկայակոչում:

Եկեղեցիաստե կամ Եկեղեցիաստե [70,
321] = Ἐκκλησιαστικός [500, 886]. Սրա
փոխարեն հայկական մատենագրության
մեջ սովորաբար գործածվում է Ժողովող
բառը, որը պարզապես Ἐκκλησιαστικός-ի
հայերեն թարգմանությունն է: Կյուրեղի եր-
կի հայ թարգմանիչը երեք անգամ Եկեղե-
ստե է կոչել նաև Երգ երգոց (Ἄσμα
τῶν ᾠδαίων) գիրքը [էջ 283, 372], հավա-
նաբար այն պատճառով, որ վերջինիս հե-
ղինակությունը նույնպես վերագրվում է
Սողոմոնին:

Չոպա [29, 33, 263] = ὁ σσωπας [425,
433, 820]. Չբավարարվելով հունարեն բա-
ռով՝ թարգմանիչը երկու տեղ տվել է նաև
նրա հայերեն թարգմանությունը՝ զոպա
մշտիկ [էջ 29]:

Հերետիկոս կամ հերետիկոսապ [48,
50, 60, 99, 101 և այլն] = αἰρεσιώτης կամ
αἰρετικός [457, 461 և այլն]: Թեև նշ-
ված բառերը այնքան էլ հազվագյուտ չեն
հայ մատենագրության մեջ, սակայն, ինչ-
պես նկատված է «Նոր Հայկազյան բառա-
րանի» հեղինակների կողմից, նրանք չա-
փազանց ստեպ են գործածված «Կոչումն
ընծայութեան» երկի հայերեն բնագրում,
մեր հաշվումներով՝ 45 անգամ, չհաշված
նույն արմատից կազմված հերետիկոս [47,
72, 330, 419] և հերետիկոսն [99, 101,
107, 311] բառերը:

Ղևտիկոնք [70] = Λευτικόν [590]...
Հայերենում, ինչպես քաջ հայտնի է, ավելի
գործածական է սույն բառի հայացված
Ղևտական ձևը: Հիշեցնենք, որ ասորական
Աստվածաշնչում այս գիրքը կրում է
Kahnē (Բահանաք) վերնագիրը, որից,
ակնհայտ է, Ղևտիկոնք ընթերցվածը չէր
կարող ծագել:

Մորոս [247, 328] = μωρός [789, 908].
Բառս բավական տարածված է հայ մատե-
նագրության մեջ, իսկ այստեղ այն նշել ենք
միայն հետևյալ Արատառումով: Կյուրեղի
երկի հայերեն թարգմանության մեջ մորոս
բառը առաջին անգամ [էջ 247] գործա-
ծված է Երկրորդ Օրինաց գրքի ԼԲ, 8 համա-
րից կատարված «ժողովուրդ մորոս» քաղ-
վածքում, որը համապատասխանում է հու-
նական նախօրինակի λαός μωρός բառե-
րին: Աստվածաշնչի հայերեն բնագրի նույն
տեղում ունենք «ժողովուրդ յիմար», իսկ
ասորական բնագրում՝ ‘āmā saklā ընթերց-
վածները:

Յակիմո ծաղիկ [344] = ὁ ἀκινυθος [933].
«Նոր Հայկազյան բառարանի» տվյալներով
«Կոչումն ընծայութեան» երկի հայերեն

թարգմանությունը նշված բառի գործածության ուղեգրային հազվագյուտ վկայություններին է:

Սուղար [176] = *сулгар* [688]. «Նոր Հայկազյան բառարանում» նշված է բառի գործածության ընդամենը եւ մեկ դեպք:

Սաիքերովն [70] = *саиқыр* [500]. Ըստ «Նոր Հայկազյան բառարանի» խնդրո առարկա հայերեն բնագիրը այս բառի գործածության միակ ուղեգրային վկայությունն է:

Թվում է, նշված փաստերը բավական են համոզվելու համար, որ կյուրեղ երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն թարգմանությունը կատարվել է հունարենից, և ենթադրյալ ասորական հոմոգրիֆի մասին առաջ քաշված տեսակետը հիմք չունի: Բնականաբար այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպես պետք է բացատրել հայերեն բնագրում ասորերենին համապատասխանող մի շարք հատուկ անունների առկայության փաստը, որի վրա, ինչպես վերը նշեցինք, ուշադրություն է հրավիրել Ս. Քոլանջյանը: Սակայն նախքան նրանց քննությանն անցնելը հարկ ենք համարում ստորև թվարկել «Կոչումն ընծայութեան» երկի հայերեն թարգմանության մեջ հիշատակված բոլոր հատուկ անունները, միատի ունենալով այն հանգամանքը, որ հուշարձանի վիեննական հրատարակությունը անվանացանկ չունի²⁰:

Արել 206²¹, Արեստոն 20, Աբիսաբ Սովմանիտացի 220, Աբրահամ 77, Ագարոս 261 (Ագար 390), Ադամ 13, Ադաս 115, Ադոնայ 141, Ագարիա 359, Աթենացիք 389, Ախազ 220, 221 (Աքազ 201), Ամարոն 17, Աղեքսանդրիա 69, Ամբակում 219, Ամուս 257, Անանիա 350, Անգե 360, Անդրեաս 376, Աննա 175, Անտիոք 347 (Անդիոք 386), Ասա[ի] 359, Ասորիք 386, Ասողիկ 50, Արամազդ 225, Արեոսպագոս 389, Արիստոտել 108, Արքեդայոս 112, Աքայար 21, Աքայեցիք 389, Աքրիպաս 390, Բաբիլովն 17, Բաղդասար 362, Բառնարաս 347, Բասիլիդես 104, Բարոք 70, Բեթղեմեմ 195 (Բեթղեմեմ 166), Բենեիկել 358, Բոսոր 258, Բոք 108, Գարրիկ 145, Գազա 347, Գալիլեա 167, Գաղատացիք 388, Գաղիացիք 354, Գեղեովն 359, Գեեզի 350, Գեթ-

սեման 175, Գողդիկ 359, Գողգոթա 2, Գոմոր 259, Գուրք 176, Դամասկոս 173, Դանիել 67, Դարեն Գարքե 218, Դանիք 14, Դեմետր Փաղեբանց 68, Դովմեսիոս 97 (Դիմեսիոս 225), Երայեցիք 74, Եգիպտոս 108, Եղովմ 258, Եթեովացիք 354, Եզեկիա 22, Եզեկիել 9, Եզր 70, Եղովմայ 388, Եղդադ 357, Եղիա 21, Եղիազար 69, Եղիշա /Եղիշե 286 (3 անգամ), 287, 350 (5 անգամ), 359, 411, 412 (Եղիսեոս 287), Եղիսարեք 224, Ենուս 358, Ենույք 34, Եսայի 1, Եսաի 327, Եսեթ 70, Երեմիա 35, Երիանոս 389, Երիբով 168, Երուսաղեմ 1, Եսայ 115, Երիմացիք 103, Եսիքոս 389 (Եսիքեոս 413), Եսեաոս 389, Եփրադա 219, Զաքարիա 216, Էմմանուել 190, Թափոր 215, Թեման 219, Թեսալոնիկե 389, Թովմայ 71 (Թովմաս 115), Իսահակ 78 (Սահակ 128), Իսրայել 17, Լաբան 228, Լիբանոս 209, Լիբեացիք 354, Լիվեացիք 385, Լիստրացիք 388, Լիբիկոն 385, Լուսին 101, Լալիափա 248, Լալին 15, Լարպոկրատես 103, Լափառնատ 81, Կեդրոն 295, Կեսար 276, Կեսարիա 386, Կերինթոս 103, Կեփա 292, Կիպրոս 388, Կիլիկեցիք 388, Կղադիոս 101, Կողոսացիք 45, Կոռնելիոս 32 (Կոռնելիս 386), Կոստանդ 293, Կորբիկոս 108 (Կորբիկոս 109), Կորնթացիք 159, Լեբնաս 115, Լեբովդես 170, Լեփեստոս 97, Լնդիկք 191, Լուսել 228, Լոովմ 101, Լոոք 70, Լրեստան 108, Լազար 13, Լովա 408, Լուկաս 130, Մակեդոնացիք 388, Մադաբա 304, Մանաս 22, Մանի 107, Մանտանոս 340, Մատթե 286, Մարիամ 130, Մարկիովն 103, Մարկոս 379, Մարոսք 354, Մարսիմիդա 340, Մելիտե 390, Մելիտովն 389, Մելիսեդեկ 168, Մենանդրոս 103, Միքեթեանք 108, Միջագետք 112, Միսացիք 388, Միքայել 355, Միքե 195 (Միքիե 359), Մուդադ 357 (Բաղդատ. անդ), Մովսես 17, Յակովք 65, Յարիմ 248, Յեզարել 21, Յեսա 222, Յերոբովամ 21, Յեփթալեայ 359, Յիշով 357 (Յեսու 70, 357, 358), Յիսուս 5, Յոպպեացիք 385, Յովք 39, Յովել 359, Յովհաննես 30, Յովնան 54, Յովսափաք 359, Յովսեփ 131, Յորդանան 33, Յուդա 71 (Յուդաս 107), Նաբովք 21, Նաբոգոդոնոսոր 24, Նազարեք 229, Նաթան 18, Նեեման 350, Նիկողեմոս 378 (Նիկոլեմոս 282), Նոյ 15, Շամրին 21, Շամրիսք 117, Շամրտացի 172, 384, 399 (2 անգամ), 406, 407 (2 անգամ), 408, Շամրտոսիք 72, Շմաովն /Շմաոն 175, 182, 230, 269, 371 (Սիմոն /Սիմոն 36, 101 և այլն), Շուշան 361, Ոգիկ 359, Ովսե 168, Որմիդ 104, Պաղեստինացիք 108, Պարսք 108,

²⁰ Մեր ցանկում ընդգրկել ենք նաև ազգերի անունները:

²¹ Նշել ենք միայն առաջին հիշատակության էջերը, իսկ ասորական հատուկ անուններին համապատասխանող ձևերի դեպքում՝ բոլոր վկայությունները:

Պատոս 62, Պեպուզան 341, Պետրոս 27, Պիթովմեոս 389, Պիդատոս Պոնտացի 85, Պոդովմեոս 68, Պրիսկիդա 340, Պրոքոս 106, Սաքատով 141, Սաքել 393, Սամուել 54, Սամփսով 359, Սաուս 78, Սաուդ 346, Սափիրայ 112, Սելովամ 234, Սեմեի 20, Սինեական լեռն 33, Սիովն 207, Սկիթիանոս 108, Սոդոմ 259, Սոդոմոն 20, Սուրամատք 354, Սոփոնիա 278, Սպանիա 354, Վադենտիանոս 104, Տաքիթա 112 (Դաքիթա 293), Տարսոն 386, Տերևիմոս 108, Տիբերիադ 175, Տիմոթեոս 391, Տիտոս 305, Տրովադա 413, Տրովացիք 389, Բախար 16 (2 անգամ), 17, 27 (Բահար 168), Բուքեն 183, Փաուս 219, Փարթար Որմիզդ 98, Փարովն 69, Փելիկս 390, Փեստոս 390, Փենեհես 235, Փիլիպպեցիք 388, Փիլիպպոս 193, Փոնդիա 341, Քադդեացիք 361, Քրիստոս 7:

Ինչպես տեսնում ենք, նշված 231 անուններից միայն հետևյալ տասն են հաճախատախանում ասորական անվանաձևերին՝ Ախազ, Եղիշա/Եղիշե, Յիշով, Ծամրին, Ծամրիտք, Ծամրտացի, Ծամրտություն, Ծմաովն/Ծմաուն, Եուշան և Բախար, որ ինքնին մեծ բաժին չի կազմում հատուկ անունների ընդհանուր քանակի մեջ²²: Փաստերը ցույց են տալիս, որ հատուկ անունների այսպիսի ձևերը, որոնք խորթ են հնչում մեր ականջին, սովորական են եղել V դ. հայ մատենագրության համար: Այդ ժամանակ հայերենը դեռևս չէր կարողացել վերջնականապես զտել և մարսել թարգմանական հսկայածավալ գրականության, հատկապես Աստվածաշնչի միջոցով լեզվի մեջ թափանցած բազմաքանակ անունները: Եվ բոլորովին տարօրինակ չէ, որ ասորական անվանաձևերը հաճախ գործածված ենք տեսնում. բուն հայկական գրական հուշարձաններում և նույնիսկ հունարենից կատարված թարգմանություններում: Ինչպես Իրենեոսի «Ընդդեմ հերձուածոց» գրքի հայերեն թարգմանության առիթով նշել է Ն. Ակինյանը, ասորերենի հետքեր համարվող Եղիշաքեթ, Եղիշա, Ծամրտացի և այլ բառերը «շատ սովորական են հայերենի մեջ, և օրինակներ կարելի է ցույց տալ նաև Եսեքիոսի Քրոնիկոնի, Յովհ. Ոսկեբերանի Մատթեի, Եսայայի, Պատմոսի թղթոց (մեկնությունների՝ Լ. Տ.-Պ.) մեջ, գրություններ, որոնց լուսարեւն թարգմանության վրայ

վայրկեան միակ անհնար է երկրային»²³: Ի դեպ, պետք է ավելացնել, որ նման հուշարձաններում հաճախ միևնույն անունը հանդես է գալիս մերթ ասորական, մերթ հունական ձևով: Վերը բերված անվանացանկից կարելի է նկատել, որ «Կոչումն ընծայութեան» երկում Եղիշա/Եղիշե անվան համար մեկ անգամ գործածված է Եղիսեսն ձևը, Յիշովի համար՝ երեք անգամ Յեսու, Ծմաուն/Ծմաովնի համար՝ քաղմաթիվ անգամներ Սիմոն/Սիմովն և Բախարի համար՝ մեկ անգամ Բահար: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ինչպես մեր բնագրում, այնպես և թարգմանական որևէ այլ հուշարձանում հատուկեմտ ասորական անվանաձևերի առկայությունը դեռևս բավարար չէ եկեղեցիների համար, որ թարգմանությունը կատարված է ասորերենից:

Կյուրեղի երկի հայերեն թարգմանության մախօրինակին վերաբերող մյուս խնդիրը ձևակերպված է Հ. Տաշյանի այն դիտողության մեջ, թե «հայը շատ կը շեղի լուսարեւեն»²⁴: Ինչպես վերը նշվեց, մեր համեմատությունները ցույց են տալիս, որ հայերեն թարգմանությունը ոչ միայն համընթաց է հունարեն մախօրինակին, այլև հաճախ պատճենում է նույնիսկ նրա շարադասական և բառակազմական առանձնահատկությունները: Եթե փորձենք մեկ բառով բնորոշել հայերեն բնագրի բնույթը, ապա այն կարող ենք կոչել **նշգրիտ** կամ **հարազատ** թարգմանություն:

Միակ ազատությունը, որ իրեն թույլ է տվել հայ թարգմանիչը, դա բառական ավելադրությունների առատ գործածությունն է: Այսպես, հետևյալ օրինակներում հունական մախօրինակի մեկ բառի դիմաց հայերեն թարգմանության մեջ դրված է երկուսը. **կատարեալ կատարեցաւ** [18] = ἐτελέσθη [396], **բայց սակայն** [19] = πλὴν [397], **գիշանել ներել** [21] = συγκαταβῆναι [400], **արդար ճշմարիտ** [21] = δίκαιος [400], **առակ օրինակի** [27] = ὑπογράμμος [424] և այլն: Հաճախ մեկ բառը վերարտադրված է նաև երեք հոմանիշներով, ինչպես՝ **հաշեր մաշեր և հալեր** [20] = ἐξέτρε [397], **բրեւց հան ընկեց** [25] = ἐξήνεγχευ [405], **դարձեալ միասնգամ անդրեն** [27, 406] = πάλιν [424, 1028], **առեալ բարձեալ բերեր** [35] = δεικνύτα [456], **տնկեալ հաստատեալ կայցեն** [48] = τεθεμελιώσθη [457], **խաղալ գալ իջանել** [98] = κατελ-

²² Ս. Հովանջյանը Կյուրեղի երկի նորահայտ պատմիկներից բերում է նաև Ծառող անվանաձևը Սաւուդի փոխարեն. տե՛ս Ս. Հովանջյան, Նորահայտ պատմիկներ..., էջ 204, 227:

²³ Հ. Ն. Ակինյան, Ս. Իրենեոս հայ մատենագրության մեջ, «Համդես ամսօրեայ», 1910, էջ 201:

²⁴ Տե՛ս Հ. Յ. Տաշյան, Յուդակ..., էջ 694:


Թեոփ [556], կանգնեաց հաստատեաց կացոյց [147] = Եղեցեալս [641] և այլն: Իսկ հետեւյալ հատվածում հունարենի մեկ բառի դիմաց միանգամից դրված է նույնիսկ չորս բառ. «ճորափետուր զարդարեալ վառեալ թոռեալ» [35] = Եղեցեալս զարդարեալս [436]: Ոճական ավելադրության իր այս հակումով թարգմանիչն ակնհայտորեն տուրք է տվել ժամանակի գրական ճաշակի պահանջներին:


«Կոչումն քննադրեան» երկի հայերեն թարգմանությունն աչքի է ընկնում եւս մի ուշագրավ հատկանիշով: Հունական նախօրինակում հանդիպող դիցաբանական հասկացություններն ու ազգերի անվանումները թարգմանիչը ոչ թե նույնությամբ ներմուծում է հայերեն քնագիր, այլ փոխարինում է հայ իրականության մեջ ընդունված համարվելով: Այսպես, Ζεւς աստծու [760] անվան դիմաց նա դնում է մերք Արամազդ [225], մերք Որմիզդ [104], համապատասխանաբար Διὸς Կուրան [997] տեղանունը թարգմանելով Որմիզդական քաղաք [385]: Հունական նախօրինակի Ἀφροδίτη [461] անվան փոխարեն հայերեն քնագրում ունենք Աստղիկ [50], Ξανθή ամսանունը [838] հայերենում վերարտադրված է Արեգ ամիս [280] մեկով, Ἀντιγόνη-ը [869, 880]՝

Նեոն [303, 310 և այլն], Ἑλένη-ը [1020, 1025]՝ Տեթամոս [399, 404 և այլն], Σαρπηδόνη-ը [576]՝ Տանիկ [108], Μενέλαος-ը [749, 756, 883]՝ Պարթև [218, 223, 314]: Միայն Մինը աստծու անունն է, որ Մինքրեանցն քառում [108] թարգմանիչը պահպանել է հունական Μίνωα մեկով [880]: Հանրահայտ դիցաբանական և ազգագիտական հասկացությունների վերարտադրման այսպիսի եղանակը նույնպես դրվար թե կարելի է նախօրինակի համեմատելական շեղում համարել:

Մնում է անդրադառնալ կյուրեղի հայերեն թարգմանության նախօրինակի հետ կապված վերջին խնդրին, որն արժարվել է Ս. Լիոնեի կողմից²⁵: Վերջինս, կասկած չունենալով հանդերձ այն հարցում, որ թարգմանությունը կատարվել է հունարենից, հայերեն քնագրի ավետարանական քաղվածքներում վեր է հանել մի շարք ընթերցվածներ, որոնք համընկնում են Աստվածաշնչի ասորական քնագրին: Այս երևույթը, տակալն, բանասերի կողմից հեշտությամբ բացատրվել է նրանով, որ թարգմանիչը մերք ընդ մերք գտնվել է Ավետարանների նախնական հայերեն թարգմանության ազդեցության տակ:

²⁵ St'u S. Lyonnet, Les origines..., p. 111-114.





ԲԱՐԻ ՍԵՐՄԱՑԱՆԸ

(Խաչատուր Կանայանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ծննդյան հարյուրամյակ... Սակայն ընդամենը հինգ տարի է անցել Խաչատուր Կանայանի մահվանից, այնպես որ ծննդյան հարյուրամյակի առթիվ կարելի է նրա մասին գրել որպես կենդանի մարդու...

Մի տոհմիկ գերդաստանի շատավիղ էր նա, որի հանդեպ բնությունը շուրջ գլուխը պեց, սակայն և Խաչատուր Կանայանը կարողացավ իմաստավորել իր կյանքը, ապրել շիտակ, արդար ու բարի, այո՛, հատկապես՝ բարի... Ամենից շատ մեր ա՛յս նահապետին են պատշաճում բանաստեղծի հետևյալ խոսքերը՝ «լույս տալով եմ սպառվել»։ Ուղիղ յոթ տասնամյակ նա սերունդ է կրթել ու դաստիարակել, բեղմնավոր դարձրել իր գրիչը, «լույսով վանել խավարը»։

Խաչատուր Կանայանը ծնվել է Իգդիրում 1881 թվականի հոկտեմբերի 27-ին (նոյեմբերի 8-ին)։ Նախնական կրթությունը ստացել է Գևորգյան ճեմարանի վարժոցում, ապա հայրենի գյուղաքաղաքում։

Խաչատուր Կանայանը 1896 թվականի աշնանը ընդունվում է Գևորգյան ճեմարանի դպրոցական բաժինը։ Գևորգյան ճեմարանը խոսում էր Խաչատուր Կանայանի սրտին որպես տիպար ուսումնական հաստատության, մանավանդ որ իր ավագ եղբայրը՝ Ստեփան Կանայանը, այդ հաստատության ուսուցիչներից էր։ Խաչատուր Կանայանը ուղիղ ինն ուսումնական տարի, մինչև 1905 թվականի ամառը, Գևորգյան ճեմարանի սան է։ Այստեղ է կազմա-

վորվում որպես անհատ, մտավորական և հայրենասեր։ Հետագայում «Էջմիածին» ամսագրում տպված «Իմ հուշերը Գևորգյան ճեմարանից» հոդվածում նա պիտի գրեր. «Ի՞նչպես կարող եմ մոռանալ ինձ... Ոգի և հույս ներշնչող մեր լուստ տաճարը, քանի որ նրա տված սնունդն է, որ տակավին ինձ կանգուն է պահում, նրա հայրենաշունչ ոգին է, որ դեռևս կայտառ է իմ մեջ և միշտ պատրաստ մվիրաբերելու այն հայ ժողովրդին, նրա ուսումնաստե՛նչ զավակներին...»¹։

Արմատական հայեցի կրթությունն ստացավ Խաչատուր Կանայանը Գևորգյան ճեմարանի փառքի շրջանում՝ աշակերտելով արևելահայ մտավորականության ընտրանիին։ Իր ուսուցիչներն էին պետականություն չունեցող մի ժողովրդի համեստ մտավորականներ, որոնք շուտով գիտական տիտղոսների արժանացան և հայկական առաջին կանառի՝ ակադեմիայի հիմնադիր անդամները դարձան։

Ծեմարանում թևածում էր Խրիմյան Հայրիկի ոգին։ Կարապետ Կոստանյան, Գարեգին վարդապետ Հովսեփյան, Հովհաննես Հովհաննիսյան, Մանուկ Աբեղյան, Սեդրակ Մանդինյան, Հրաչյա Աճառյան, Կոմիտաս... Ահա ոչ լրիվ ցուցակը այն մվիրյալների, որոնց աշակերտել է Խաչատուր Կանայանը։ Այդ մվիրյալ անհատներն էին, որոնք հայ պետականության բացակայության պայմաններում հայեցի դաս-

¹ Տես «Էջմիածին» ամսագիր, 1964, թիվ 2, էջ 26։

տնտեսականության, ոգեղեն անունը ջանքերին մեր ժողովրդին, իսկ մեր ժողովրդի նոր վերածննդից հետո քույրամկեր աշխատեցին նոր մարդուն կերտելու համար:

Հուլիսագրության գեղեցիկ նմուշ է Սաչատուր Կանայանի վերոհիշյալ հոդվածը, որի մեջ կենդանի գծերով, համով-հոտով նկարագրված է Գևորգյան ճեմարանի ներքին կյանքը: Երախտագիտության ինչպիսի՞ զգացում իր դպրոցի և իր ուսուցիչների հանդեպ, որոնք ամփոփված են, իր արտահայտությամբ, երկու քառի մեջ՝ «Alma Mater—Ամուցիչ Մայր»:

24-ամյա պարթևահասակ երիտասարդ, հավատարիմ՝ ճեմարանում իր ստացած դաստիարակության, նվիրվում է հայ ժողովրդի լուսավորության գործին: 1905 թ. կարճ ժամանակ Երևանի Գալանյան օրիորդաց դպրոցում որպես ուսուցիչ պաշտոնավարելուց հետո, մեկնում է իր հայրենի գյուղաքաղաք Իգդիր:

Սաչատուր Կանայանի ջանքերի շնորհիվ է, որ Իգդիրում կազմակերպվում է «Կովկասի հայոց քարեգործական ընկերության» մասնաճյուղը, որի նախագահն է եղել ինքը մինչև 1910 թվականը, մինչև իր հեռանալը Իգդիրից: Խ. Կանայանը քաղաքում է նաև հատուկ գրադարան-ընկ թերթարան Սաչատուր Արուսյանի անվան: Կազմակերպում է քանավե՛ներ, դասախոսություններ, ներկայացումներ, թղթակցում է ժամանակի պարբերականներին: Ի դեպ 1907-ին, կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ, որպես Նոր Նախիջևանում հրատարակվող «Մեր ձայնը» լրագրի թղթակից, Սաչատուր Կանայանը նորից էջմիածնում է: Այս անգամ առիթ է ունենում ծանոթանալու Արշակ Զուպանյանին, Վահան Թեքեյանին և Օհնի Զիֆթե-Սարաֆին: Իր թղթակցությունները կանոնավոր կերպով և հանգամանորեն տպված են «Մեր ձայնը» լրագրում (1908 թ., նոյեմբերի 7, 9, 10, 14):

1910 թվականին Սաչատուր Կանայանը փոխադրվում է Թիֆլիս, որտեղ նույնպես պաշտոնավարում է որպես ուսուցիչ հիմնականում Մարիամյան-Հովհաննյան, ինչպես նաև Քամոյան օրիորդաց դպրոցներում, Լևոնտյանի մասնավոր գիմնազիոնում: Թիֆլիսում արդեն իր պաշտոնակիցներն են Ստեփան Մալխասյանցը, Դերենիկ Դեմիրճյանը, Հարություն Սուրխաթյանը, Արամայիս Երզնկյանը, Հայկ Ազատյանը, Սարգիս (Սերգո) Նանդանը, Ասքանազ Մոսկալանը և ուրիշներ: Սաչատուր Կանայանին Թիֆլիսում աշակերտել են քանաստեղծ Վաղարշակ Նորենցը, հմուտ

գրականագետ, պրոֆեսոր Նորայր Դաբաղյանը և ուրիշներ:

Ուսուցչի աշխատանքի ամենատարբեր գնահատականը նրա աշակերտինն է, ուստի ստորև քերում ենք Սաչատուր Կանայանի՝ Հովհաննյան դպրոցի աշակերտների, մեր օրերում շնորհալի դերասանների ու բեմադրող Ասողիկ Աղապյանի գնահատանքի հետևյալ խոսքերը.

«Հայաստանի աշխարհագրության դաս է:

Հենու հայրենիքից, աշակերտական նրատարանին նստած, մեր սիրելի ուսուցիչ Սաչատուր Կանայանի հետ մտովի ճանապարհորդում ենք Հայոց աշխարհում: Պատին փակցված Հաղաստանի մեծագիր քարտեզը կարծես կենդանանում է նրա ոգեշունչ նկարագրության շնորհիվ... Սաչատուր Կանայանն առաջինը ծանոթացրեց մեզ հայրենիքին ու սովորեցրեց սիրել այն: Ու երբ տարիներ հետո ես եկա Հայաստան, այստեղ ամեն ինչ այնքան ծանոթ թվաց ինձ ու հարազատ... Եվ այդ ամենի համար երախտապարտ եմ քեզ, իմ սիրելի՝ ուսուցիչ, Սաչատուր Կանայան»:

Թիֆլիսում նա դասավանդել է հայոց լեզու, ընթերցանություն, հայոց պատմություն, Հայ Եկեղեցու պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, գեղագրություն: Ուսուցչական աշխատանքին զուգընթաց, Սաչատուր Կանայանը Թիֆլիսում նույնպես հասարակական գործունեություն է ծավալում. նա Հայոց ազգագրական ընկերության, Ուսուցչական, հայ գրչի մշակների միությունների գործունյա անդամ է, թղթակցում է մի շարք պարբերականների:

Ահա վերջապես հասնում է զանկալի օրը. Սաչատուր Կանայանը 1921 թ. օգոստոսին փոխադրվում է Երևան և Արամայիս Երզնկյանի միջնորդությամբ անմիջապես աշխատանքի անցնում լուսավորության բնագավառում: Սկսվում է Սաչատուր Կանայանի գիտա-մանկավարժական գործունեության ամենաբեղուն շրջանը. ուսուցիչ միջնակարգ մասնագիտական և քարձրագույն դպրոցներում, զանազան տեխնիկումներում, դասախոս համալսարանին կից քանվորական ֆակուլտետներում, Հայաստանի մի քանի քարձրագույն ուսումնական հաստատություններում, այն վերապատրաստման դասընթացներում:

Սաչատուր Կանայանը մեկ տասնամյակից ավելի (1957—1969) Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչն է եղել, իսկ 1969-

² «Հովհաննյան դպրոց», Երևան, 1979, էջ 81:

ից մինչև իր կյանքի վերջը՝ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի դասախոս և խորհրդատու։ Տողերիս հեղինակը շուրջ 20 տարի աշխատել է Խաչատուր Կանայանի հետ. բոլորը նրան գիտեին որպես մեր մշակույթի բարի սերմնացանի։ Նա հավատամք ուներ. իր հավատամքը մեր ժողովուրդն էր, մեր լեզուն, մեր մշակույթը։ Տամկացած աչքերով էր նա խոսում այս ակիրական, սուրբ հասկացությունների մասին։ Նա կենդանի կամուրջ էր, որ մեզ միացնում էր մեր նախնիներին։ Ո՛ւմ, նույնիսկ մի քանի անգամ նա չի պատմել սփյուռքահայ այն մանկան մասին, որ իր սնարին կախված Մեսրոպ Մաշտոցի ակարին նայելով հարց է տալիս իր մորը.

— Մայրի՛կ, սա մարդը ո՞վ է։

— Որդի՛ս, անկա մարդ չէ, անկա սուրբ է,— լինում է հայ մոր պատասխանը։ Ո՞վ չի փշաքաղվել ու հուզվել Կանայանից լսելով այս խոսքերը, երբ մանավանդ տամկանում էին նրա տառապանք տեսած աչքերը։

Խաչատուր Կանայանը հայոց լեզվի պաշտամունք ուներ, հոգեպես ցնծության մեջ էր ի տես այն քանի, որ ոչ միայն Հայաստանի, այլև մեր Միության տարբեր քաղաքներից մարդիկ գալիս են Երևան կրթություն ստանալու, մայրենին սովորելու։ Մեծապես ընդառաջում էր հատկապես մեր հանրապետությունից դուրս բնակվող ուսանողներին։ «Աչքերի մեջ կայծ կա, կտվորի»,—ասում էր նա մեզ՝ երիտասարդներին, երբ արդար խստություն էինք գործադրում նրանց հանդեպ։ Օրջանելով Հովհաննես Թումանյանի հայտնի խոսքերը՝ «Ամենայն հայոց ինստիտուտ» էր կոչում նա հեռակա ինստիտուտը։ Մեծ կարևորություն էր տալիս ոգու դաստիարակությանը, անհունորեն սիրում ու պաշտում էր մեր նախնյաց լեզուն։ Իր մահկանացուն կնքելուց ընդամենը մի քանի ամիս առաջ իր մի հոդվածում նա գրել է. «Ծնորհալի բանաստեղծ Վահան Տերյանը հայոց լեզուն համարում է արքայական լեզու, իսկ հատկապես գրաբարի մասին ասում է. «Նա ոչ թե լեզու է, այլ երկնային երաժշտություն»։ Ապա ինքն ավելացնում է. «Թող այդ «երկնային երաժշտության» դալլայիկները հավետ հնչեն հայ սերունդների ականջին»։

Մենք այսպես ենք ճանաչել Խաչատուր Կանայանին։ Երևանում նույնպես, մանկավարժական գործունեությանը զուգընթաց, Խաչատուր Կանայանը ծավալում է գիտահետազոտական, թարգմանական, գրական

և խմբագրական գործունեություն։ Առանձնապես ուշագրավ է «Ավետիք Խառակյանի բանաստեղծությունների լեզուն» (Երևան, 1940) ուսումնասիրությունը։ Մասնագետների վկայությամբ այս աշխատանքով մեզանում լավ հիմք դրվեց հայ գրողների լեզվի և ոճի գիտական ուսումնասիրության։ Ի դեպ, այս աշխատանքը իր թեկնածուական ավարտաճառն է եղել՝ պաշտպանված Հրաչյա Աճառյանի և Հայկ Գյուլիքեֆյանի ընդդիմախոսությամբ։ Կանայանը գրել է հոդվածներ գրաբարի քերականության հարցերի վերաբերյալ, կազմել է հայոց լեզվի և գրականության դասագրքեր Ակսել Բակունցի, Գեղամ Սարյանի, Սողոմոն Տարոնցու, Մկրտիչ Մկրյանի և ուրիշների մասնակցությամբ։

